

ՊԵՏԱԿԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

31 JAN 2018

ՎԻԼԶԵԼՄ ՊԻԿ

ԿԼԱՐԱ
ՑԵՏԿԻՆ



ԳԵՍՈՎՈՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1939



11-286869/

ВИЛЬГЕЛЬМ ПИК
КЛАРА ЦЕТКИН

Էջ. Արմ. ՀՀ, Երևան, 1939

Կլարա Յետկինը իր բազմակողմանի մարտական կյանքի վերջին տարիները անց կացրեց Մոսկվայից վոչ հեռու, Արխանգելսկոյե գյուղի սահմատորիայում։ Հասակն ու ծանր հիվանդությունը ջլատել ելին նրա ուժերը, տեսողությունը համարյա հանգել եր։ Նա անկողնին եր գամվել։ Սակայն նրա անխորտակելի կամքը պայքարում եր այդ հարկադրական անգործունեցության դեմ։ Չնայած հիվանդությանը՝ նա շարունակում եր աշխատել։ Կլարա Յետկինի հոգեկան յեռանդն այնքան մեծ եր, վոր նա մինչև իր կյանքի վերջին ժամը մասնակցում եր աշխատավորների ազատադրման մեծ պայքարին։

Իր մահից ընդամենը 2 որ առաջ, 1933 թ. հունիսի (18-)ին նա սկսեց թելաղերել մի հոգված, վորով ուղում եր ցույց տալ սոցիալ-դեմոկրատիայի և Ա ինտերնացիոնալի սեակցիոն լիդերների դիրքերի սիալ լինելը բանվոր դասակարգի պայքարի կարևորագույն հարցերում, նախ և առաջ՝ նրանց թշնամական վերաբերմունքը դեպի միասնական ձակատը։ Նա ուղում եր սոցիալ-դեմոկրատական բանվորական մասսաներին բացատրել, վոր Գերմանիայում՝ Փաշիզմի հաղթանակը պետք է լուրջ դառհանդիսանա նրանց համար, վոր միմիայն միասնական ձակատ ստեղծելը կողնի ազատելու Երնստ Ռելմանին և բոլոր բանտարկված հակաֆաշիստներին, հասնելու պրոլետարիատի հաղթանակին։ Սովորաբար Կլարա Յետկինը հոգվածներ գրե-

լիս չեր սիրում ողտովել ուրիշների տեխնիկական ոժանդակալությունից։ Սակայն համարյա հանգած տեսողությունը նրան հնարավորություն չեր տալիս ինքնուրույն կերպով գրելու, և նա հարկադրբաժած եր լինում թելադրել իր մտքերը, թեև այդ բանը շատ անախորժ եր նրա համար։ Մեռնողի ուժերը պակաս եյին, նա դժվարությամբ եր չնչում և շուտով հարկադրված յեղավ դադարեցնել նաև այդ աշխատանքը։ Այդ հանդամանքը մեծ ցամքատճառեց Կլարա Յետիինին։

Զե՞ վոր նրա առաջ դեռ այնքա՞ն շատ չլուծված մեծ հարցեր կային։ Նա նախատեսել եր գրել իր ինքնակենսագրությունը։ Նա ուզում եր պրոլետարիատին պատմել իր ամբողջ նշանակալի կյանքի բովանդակության և նպատակասլացության մասին։ Անավարտ եր մնացել նաև նրա մի մեծ, թեորետիկ աշխատությունը։

Չնայած իր ուժերի սաստիկ թուլությանը, ուժադրություն չդարձնելով բժիշկների խորհուրդներին՝ Կլարա Յետիինը փորձեց հաջորդ որը շարունակել աշխատանքը։ Սակայն ուժերը նրան դավաճանեցին։

Հետ ընկնելով բարձերի վրա՝ նա կամացուկ ձայնով սկսեց խոսել իր յերկարամյա մարտական ընկերոջ՝ Ռոզա Լուքսեմբուրգի մասին, վորին զաղանաբար սպանել եյին։ Այդ զաղբելի սպանության ասսոցիացիայով՝ նրա խորչումած, պառաված ձեռքը իր առաջ դրված թերթիկի վրա ատելությամբ գծեց «Գյորինդ» բառը։ Նա յերկու անդամ ընդդեց այդ անիծված անունը։ Այդ վերջին ժամին նա մտածում եր բանվոր դասակարգի մահացու թշնամու, ֆաշիստական արյունաբրու շան, բանվորների հաղարապատիկ զահճի մասին։ Նրա վերջին ժամերը լի եյին թշնամիների գեմ պայքարելու և բարեկամների մասին ունեցած մտքերով։ Հունիսի 19-ին մի տոթ յերեկո յեր։ Փոթորիկը

մոտենում եր։ Կլարան զգում եր, վոր կյանքը հրաժեշտ եր տալիս իրեն։ Ծնչառությունն ավելի ու ավելի ընդհատ եր զառնում։ Սիրտը խփում եր դանդաղ, հազիվ լսելի ձայնով։ Կլարան այլքս չեր ձանաչում իր մերձավորներին։ 1933 թվի հունիսի 20-ին, գիշերվա ժամը 2-ին, վըա հասավ մահը։

Հանդավ պայքարով ու աշխատանքով լի կյանքը։ Պրոլետարական հեղափոխականի, աշխատավորների զեկավարի քաջարի սիրտը դադարեց բարախելուց։ Պրոլետարիատի մարտական շարքերից հեռացավ նա, վոր ջերմորեն պայքարել եր խաղաղության գործի համար, պրոլետարական համեմաշխատության մեծ գաղափարի համար, աշխատավոր կանանց ազատագրման համար, պրոլետարական հեղափոխության համար, սոցիալիզմի համար։

Նրա մահվան լուրը ծանր հարված հասցրեց բոլոր նրանց, ովքեր ճանաչում եյին Կլարային։ Մեծ ե այն բացը, վոր առաջացրեց մեր շարքերում Կլարա Յետիինի մահը։



Կլարա Յետիինի դադաղը դիակի հետ միասին գորիադրություն Մոսկվա և գրմեց Միությունների Տան Սյունազարդ գահինում։ Մոցիալիստական Մոսկվայի հարյուր հազարավոր բանվորներ ու բանվորներիներ, կարմիր բանակայիններ և ուսանողներ, դպրոցականներ ու յերեխաներ անցան նրա զագալի մոտով։ Նրանք հրաժեշտ եյին տալիս նրան՝ հեղափոխական մտքի ու գործի յերկու հսկաների՝ Լենինինի և Ստալինի հավատարիմ զինակցին։ Պատվավոր պահակ եյին կանգնել Մոսկվայի ձեռնարկությունների լավագույն հարվածայինները, կուսակցական ու պրոֆմիութենական աշխատողները, Համ Կ(բ)Կ-ի, կոմինտերնի և Պրոֆինտերնի զեկավարները։ Հանդիսավոր կերպով ու վշտալի եյին

տարածվում գագաղի վրա սպո սիմֆոնիայի հըն-
չյունները:

Հունիսի 22-ին ցերեկվա ժամը չորսին կլարա
Յետկինի աճյունասափորի մոտ կանգնեց վերջին
պատվո պահակը: Կանգնեց այն ժարդը, վոր շա-
րունակում ու զարդացնում և Մարքսի-Ենդելսի-
Լենինի գործը, Խորհրդային Միության և ամբողջ
աշխարհի պրոլետարիատի մեծ առաջնորդը՝ ըն-
կեր Ստալինը: Նրա հետ միասին կանգնեցին ըն-
կերներ Մոլոտովը, Վորոշիլովը, Հեկերտը: Նրանք
իրենց ուսերի վրա վերցրին կլարա Յետկինի աճ-
յունասափորը և տարան դեպի յելքը:

Կարմիր Մոսկվայի բանվորներն ու բանվորու-
հիները, Լենինգրադի և Խորհրդային յերկրի բան-
վորական այլ խոչը կենտրոնների պատվիրակու-
թյունները հավաքվեցին Միությունների Տան շեն-
քի առաջ, վորպեսզի իրենց վերջին պարտքը հա-
տուցեն կլարա Յետկինին: Սպո թափորը դանդա-
ղորեն շարժվում եր դեպի Կարմիր հրապարակը:
Այստեղ հրաժեշտի միտինգի եյին հավաքվել հա-
րյուր հազարամյոր բանվորներ, բանվորուհիներ և
կարմիր բանակայիններ: Նրանց հետ միասին մի-
լիոնավոր մարդիկ ամբողջ աշխարհում այդ վայր-
կյանին վողբում եյին կլարա Յետկինի՝ իրենց բո-
ցաշունչ դեկավարի ու բարեկամի մահը:

Պատմական Կարմիր հրապարակում, այն դամ-
բարանի աջ թեկի վրա, վորտեղ հանդչում և մեծ
Լենինի աճյունը, յերեացին չամ. Կ(ր)Կ-ի, խոր-
հրդային կառավարության, Կոմինտերնի առաջ-
նորդները: Ճապոնական հնագույն հեղափոխական
Սեն Կատայաման բաց արեց սպո միտինգը: Զերմ
խոսքերով հրաժեշտ տվեց նա անհողդողդ հեղա-
փոխական կլարա Յետկինին: Նրանից հետո Կոմին-
տերնի անունից հանդես յեկավ Փրանսիական նա-
վատորմի սեծովյան ապստամբության հերոս Ան-
դրե Մարտին: Նա խոսում եր այն մասին, թե մի-

չազգային ինչպիսի խոշոր նշանակություն ունեն
կլարա Յետկինի կյանքը, պայքարն ու հեղափո-
խական աշխատանքը: Գերմանական կոմունիստնե-
րի անունից հանդես յեկավ Փրից Հեկկերտը. հան-
գուցյալի գագաղի մոտ նա մարտական յերդում
տվեց՝ խորհուրդների համագերմանական առաջին
համագումարի բացման որը կլարա Յետկինի աճ-
յունասափորը հանդիսավոր կերպով փոխադրել
Գերմանիա:

Լենինի-Ստալինի մեծ կուսակցության անու-
նից, վորի հետ անխզելի կապերով կապված ե յե-
ղել կլարա Յետկինը, հանդես յեկավ ընկեր Մոլո-
տովը: Նա խոսեց խոր համերաշխության այն զգաց-
մունքի մասին, վորը կապում է ոռոսական բանվոր-
ներին ու գյուղացիներին գերմանական պրոլետա-
րիատի ազատագրական պայքարի հետ՝ ընդդեմ
Փաշիզմի: Ընկեր Կրուպսկայան, կլարա Յետկինի
մերձավորագույն բարեկամը, պատմեց կլարայի
մեծագույն ծառայությունների մասին կանանց մի-
ջազդային հեղափոխական շարժման մեջ:

«Դուք զոհ գնացիք կատաղի պայքարում» մար-
տական սպո քայլերգի հնչյունների տակ Համկ(ր)Կ-ի
և Կոմինտերնի դեկավարները նորից բարձրացրին
աճյունասափորն իրենց ուսերին և տարան դեպի
Կրեմլի պատը: Թանկագին աճյունը տեղավորեցին
առհավետ քնած ուրիշ հերոսների աճյունների կող-
քին: Վորմախորշը ծածկվեց հուշատախտակով,
վորի վրա գրված ե կլարա Յետկինի անունը, նրա
ծննդյան ու մահվան տարեթվերը: Սպո քայլերգը
լուեց: Նրան փոխարինելու յեկան «Ինտերնացիոնալ»
հեղափոխական հիմնի գլարթ հնչյունները: Գլուխ-
ները խոնարհելով՝ Մոսկվայի աշխատավորներն
ու Կարմիր բանակի դորամասերն անցան թարմ
գերեզմանի մոտով:

★

Հեռացավ մեղանից ականավոր հեղափոխական
որիբունը:

Շատ տարիներ առաջ կլարա Յետկինն իր մարտական զինակիցների՝ գավաճանաբար սպանված կարև կիրկնեխտի և Ռողա Լուքսեմբուրգի գերեզմանի մոտ ասել ե.

«Պատմական ավանդությունն ասում ե. Կատալառնյան գաշտերում ժողովուրդների ճակատամարտի ժամանակ հակառակողներն այնպիսի կատաղությամբ եյին կռվում, վոր մեռնելուց հետո ել նրանց հոգիները շարունակում եյին կռվել կռվի դաշտի վերևում։ Մեր անմոռանալի, ընկած զինակիցները պայքարը շարունակում են վոչ թե «այն աշխարհում», այլ մեր միջավայրում, մեզ հետ միասին։ Նրանք չեն կարող մեռնել. յերբեք չի մեռնի այն, ինչ նրանք տվել են մեզ։ Նրանց սխրագործությունը մտել ե պրոլետարական մասսաների միս ու արյան մեջ, գիտակցության, կամքի, գործողության ե վերածվել… Այսոր Գերմանիայի և ամբողջ աշխարհի պրոլետարիատի մեջ ծնվում են հազարամորնոր մարտիկներ, վորոնք սպանված առաջնորդներին հավասար են իրենց ուժով և մաքի անազարտությամբ, բնալորության կայունությամբ և պարտքի նկատմամբ ունեցած հավատարմությամբ, իրենց համարձակությամբ և անձնազոհությամբ։ Այդ պատճառությունը մենք չպետք ե վողբանք նրանց, այլ պետք ե պայքարենք։ Նորից են հնչում մարտական ազգանշանները, նոր կոփի և սկսվում։ Այդպես ել կլարա Յետկինը շարունակ ապրելու յե կապիտալիստական յերկրների ու գաղութների միլիոնավոր կեղեքված մասսաների հիշողության մեջ՝ կարեքից ու ստրկությունից ազատագրվելու համար նրանց մզած պայքարում։ Կլարա Յետկինի կյանքն ակնառու որինակ կհանդիսանա նրանց համար. աշխատելով հավասարվել այդ կյան-

քին՝ նրանք նոր ուժեր կհավաքեն, վորպեսզի գընան Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության ուղինով, կապիտալիզմի տապալման և կոմունիստական կարգերի հաստատման ուղինով։ Այդ ուղին նրանց համար վառ լուսավորում ե խորհրդագյին աստղը, սոցիալիստական հայրենիքի աստղը, հայրենիք, վորտեղ մեր մեծ Ստալինի ղեկավարությամբ վոչնչացված են մարդու շահագործումը մարդու կողմից, շահագործող դաստիարակերը, վորտեղ սոցիալիզմը նորանոր հաղթանակներ ե տանում և ավարտվում ե անդասակարգ սոցիալիստական հասարակակարգի կառուցումը։

Մենք ամեն տարի մեծարում ենք մեր կլարայի հիշատակը։ Նրա մահվան որը հայտարարված է ՄՈՊՐ-ի շարքերի մեջ հավաքագրելու միջազգային որ։ Մեր գիտակցության մեջ միշտ թարմ կմնա կլարա Յետկինի անխոնջ, մինչև վերջին շունչը շդաղարած պայքարի հիշատակը, պայքար, վոր մղվում եր բոլոր կեղեքվածների և շահագործվողների մեծ նպատակի համար։

Այժմ, յերբ Փաշխտական ագրեսորներն ամբողջ աշխարհի ժողովուրդներին հրամ են համաշխարհային նոր պատերազմի անդունդի մեջ, կլարա Յետկինի, պատերազմի հանցավոր հրձիդների գեմ պայքարող այդ անհողողող մարտիկի, Փաշիզմի գեմ միասնական ճակատի այդ յետանդուն պաշտպանի պատկերը մի սիմվոլ կդառնա, վոր աշխատավորներին կոչ կանի գեպի վճռական մարտ, միջազգային համերաշխության դրոշների տակ։

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ԿՅԱՆՔԸ

Կլարա Յետկինը ծնվել է 1857 թվի հունիսի 5-ին Սաքսոնիայում, գյուղական ուսուցչի ընտանիքում։ 17-ից մինչև 21 տարեկան հասակը նա սովորել է մասնավոր դպրոցում՝ Լայպցիգում և ավարտելուց

Հետո սկսել ե աշխատել վորպես մանկավարժ : Այդ նույն տարիներին նա Լայպցիգում հանդիպել ե մի իրումք ուսւ հեղափոխական ուսանողների ու եմիգրանտների հետ և ծանոթացել ե նրանց քաղաքական հայացքներին : Նա մտերմանում է նաև մի արհեստավորի հետ, վորն այն ժամանակը դեռ նոր սաղմնավորված սոցիալ-դեմոկրատական շարժման ջերմ կողմնակից եր : Նրա հետ նա հաճախ այցելում եր բանվորական ժողովները : Նոր ծանոթությունները շուտով լուրջ դժգոհություններ առաջացրին կարայի ծնողների մեջ : Սակայն հեղափոխական կայծն արդեն այնքան ուժեղ եր բորբոքվել յերիտասարդ աղջկա մեջ, վոր հարադարձների հետ ունեցած կոնֆլիկտը չեր կարող հանդցնել այն :

Կարա Ցետկինի հեղափոխական հայացքներն այն ժամանակ գեռ զգալի չափով բղխում ելին զդացմունքից, նրա մեջ պակասում եր անհրաժեշտ տեսական պատրաստությունը : Բայց նա համոզված հեղափոխականի ամրող խանդավառությամբ պաշտպանում եր իր հայացքները :

Կապիտալիզմի բուռն զարգացումը Գերմանիայում, Բիսմարկի ժամանակաշրջանում, մանավանդ 1870-1871 թվականներին Ֆրանսիայի հետ ունեցած պատերազմից հետո հանգեցրեց դասակարգային պայքարի սրմանը : Այդ հանգամանքը կարա Ցետկինին դրդեց զբաղվելու գիտական սոցիալիզմով, վորպեսզի տեսականորեն հիմնավորի իր հեղափոխական հայացքները : Միևնույն ժամանակ սկսեց զարգանալ յերիտասարդ բանվորական շարժումը, վորի առաջնորդները՝ Ավգուստ Բերելն ու Վիլհելմ Լիբկնիստը գիտական սոցիալիզմի մեծ հիմնադիրների՝ Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Ենգելսի ուժեղ ազդեցության տակ ելին դտնվում :

Փարիզյան կոմունայի՝ պրոլետարիատի գիլտատուրա հաստատելու այդ առաջին փորձի պահ-

ծալի որերը յերկյուղ ներշնչեցին ամբողջ աշխարհի տիրող գասակարգերի ներկայացուցիչներին : Գերմանական բուրժուազիան, յունկերներն ու չոհենցուլերների միապետությունը նույնպես վախեցած ելին : Ռայխսկանցլեր Բիսմարկն ուղում եր փորձ անել բանվորական շարժումը ճնշել «Սոցիալիստների զեմ բացառիկ որենքի» ողնությամբ, վոր ուժի մեջ եր 1878-ից մինչև 1890 թվականները : Բանվորական կազմակերպությունները ցըվեցին, բանվորական թերթերն արգելվեցին, բանվոր դասակարգի առաջնորդները բանտերը նետվեցին, արտաքսվեցին յերկրից, հարկադրված յեղան թափառելու :

Սակայն բուրժուազիան չկարողացավ խեղզել բանվորական շարժումը : «Սոցիալիստների զեմ որենքը» չարգարացրեց իր վրա դրված հույսերը : Սոցիալիստական շարժումը, չնայած հետապնդումներին, աճում եր ու ընդդրկում պրոլետարիատի ավելի ու ավելի լայն շրջանները :

Գերմանական բանվորական շարժման համար ծանր ժամանակաշրջանում կարա Ցետկինը բոլոր նրանց հետ ե, վորոնց հալածում և հետապնդում ե գերմանական բուրժուական ուսակցիան :

Ուստական եմիգրանտների շրջանում, վորոնց հետ կարա Ցետկինը հանդիպում եր Լայպցիգում, նա ծանոթացավ ուսւ հեղափոխական Ոսիպ Ցետկինի հետ, վորը գերմանական սոցիալ-դեմոկրատիայի անդամ եր, Մարքսի և Ենգելսի ուսմունքի բուռն պաշտպան : Սերտորեն համագործակցելով նրա հետ՝ կարա Ցետկինը սիստեմատիկաբար ուսումնասիրում ե Մարքսի և Ենգելսի յերկերը և ակտիվ կերպով մասնակցում բանվորական շարժմանը :

Եերբ «Սոցիալիստների զեմ որենքի» ուժով Լայպցիգում պաշտպական դրություն և հայտարարվում, Ոսիպ Ցետկինը ձերբակալվում ե և արտաքսվում Գերմանիայից : Նա ուղեռորդում և Ֆրան-

սիա : Գերմանիայից հարկադրված եւ լինում հեռանալ նաև կլարա Յետկինը : Վորոշ ժամանակ նա ապրում եւ Ավստրիայում և իտալիայում, վորտեղ աշխատում եր վորպես զաստիարակչուհի : Այնուհետեւ 1882 թվականի ամռանը նա բնակություն եւ հաստատում Յուրիխում (Շվեյցարիա) : Այստեղ կլարա Յետկինը պրոֆեսիոնալ հեղափոխականի դերին եւ անցնում : Նա գործոն մասնակիցն եւ դառնում գերմանական սոցիալիստների մի խմբի, վորոնք Գերմանիա եյին փոխադրում գերմանական սոցիալ - դեմոկրատիայի կենտրոնական որդան «Սոցիալ-դեմոկրատը»:

Այդ թերթը, վոր իր հեղափոխական պրոլետարիան բնույթով պարտական եր նախ և առաջ ենդելսի քննադատությանը և ողնությանը, մեծդեր խաղաց Գերմանիայում անլեզալ բանվորական շարժում ստեղծելու գործում և նշանակալի չափավագնեցնրա սոցիալիստական զարգացմանը : Թերթերն անլեզալ կերպով Գերմանիա ուղարկելն իրականացնող խմբակի գլուխն եր կանոնած Յուլիոս Մոտաելերը, վորը գերմանական սոցիալ-դեմոկրատիայի պատմության մեջ «Կարմիր փոստապետ» պատվավոր մականունն եր ստացել : Թերթերի առաջումը կատարվում եր ամենաբազմազան ճանապարհներով, փոստիկանության ու մաքսատան իշխանությունների, կայզերական Գերմանիայի լրտեսների ու գործակալների մի ամբողջ վոհմակի հետ շարունակական լուրջ ընդհարումներ ունենալու պայմաններում : Կլարա Յետկինը շատ շուտով աչքի ընկնող տեղ գրավեց Մոտելերի աշխատակիցների մեջ : Այդ աշխատանքը, վոր նա կատարում եր, խորապես զիտակիցելով իր պարտականությունը, ամբազնում եր նրա մեջ հեղափոխական զասակարգային ինքնապիտակցությունը և անվերապահ հավատարմությունը բանվոր դասակարգի գործին :

Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի պատմության այդ հերոսական ժամանակաշրջանում, բիսմարկյան արտակարգ որենքի որերին կլարա Յետկինը գործում եր վորպես պրոլետարական հեղափոխության զինվոր : Այդ ժամանակ նա ձեռքբեց ընդհատակյա աշխատողի այն հատկությունները, վորոնք ավելի ուշ նրան հնարավորություն տվին դառնալու բոլցելի, կոմունիստական ինտերնայցիոնալի առաջավոր մարտիկ :

Փարիզ փոխադրվելով՝ կլարան ամուսնացավ Ոսիալ Յետկինի՝ իր քաղաքական բարեկամի և մարտական ընկերոջ հետ : Յերկար ու ձիգ եյին անցնում եմ իդրացիայի ծանր ու տիսուր որերը, վոստիկանության հետապնդումներ, բնակարանից վտարվել՝ վարձը չվճարելու համար, փատ ունունդ՝ թարգմանություններից վաստակած կոպեկներով : Ամուսիններն իրենց յերկու փոքրիկ յերեխաների հետ միասին զրկված եյին ամենանհաժանաժեշտեց բաներից : Այդ դրությունն ել ավելի վատացավ, յերբ Ոսիալ Յետկինը ծանր հիվանդացավ և մինչև իր կյանքի վերջը հաշմանդամ մնաց : Ընտանիքի նյութական հոգսերի ամբողջ ծանրությունն ընկավ կլարա Յետկինի ուսերին : Նա իր սեփական փորձով իմացավ պրոլետարական կնօջ և մոր վիճակի ծանրությունը կապիտալիստական պետության մեջ :

Այն ժամանակ արգեն նրա մեջ հասունացել եր իրեն՝ կանանց միջազգային պրոլետարական շարժման զարգացմանը նվիրելու վորոշումը :

Կլարա Յետկինի Փարիզում ապրելը նրան վոչ միայն հոգսեր ու զրկանքներ, այլև մեծ ուրախություն տվեց : Այդ ուրախությունն այն մտերմությունն եր, վոր կլարային կապում եր կարլ Մարքուի աղջկա՝ Լառըրայի և նրա ամուսնու՝ Պոլ Լա-

Փարզի հետ: Նա մտերմացավ նաև Ժյուլ Գեղի¹⁾ հետ, վորն այն ժամանակ բանվորական շարժման հիմնական հարցերում ճիշտ մարդսիստական գիրքավորում ուներ: Գեղը և հատկապես Պոլ Լաֆարդը շատ բան արեցին ֆրանսիայում գիտական սոցիալիզմի հիմունքների պրոպագանդայի դործում: Նրանք մասսայականացնում եյին «Կոմունիստական մանիֆեստի» գաղափարները ֆրանսիական պրոլետարիատի մեջ և կատաղի կերպով պայքարում եյին բանվոր դասակարգի միջավայրում յեղած ուղղունիստական մանր-բուրժուական հոսանքների դեմ: Յեկը, թեև Լաֆարդի ու Գեղի աշխատանքների մեջ խոչոր թերություններ են յեղել, այնուամենայնիվ ֆրանսիական մարդսիզմի այդ ականավորագույն ներկայացուցիչների հետ ունեցած շրջադարձը կարա Յետինի համար հանդիսացավ մի դպրոց, վորտեղ նա ծավալեց ու խորացրեց իր տեսական գիտելիքները:

II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈՏ

I ինտերնացիոնալը՝ գիտական սոցիալիզմի հիմնադիրների՝ Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Ենգելսի զավակը, Փարիզի Կոմունայի պարտությունից և նրան հաջորդող միջազգային բանվորական շարժման մեջ առաջացած ժամանակավոր դադարից հետո վայր իջավ պատմական թատերաբեմից: Սակայն նրա պատմական մեծ խնդիրը՝ հանուն սոցիալիզմի միջազգային պրոլետարական պայքար ծավալելու համար իդեոլոգիական նախադրյալների ստեղծումը և դասակարգային պայքարի համար միասնական տակտիկայի կոփումն արդեն կատարված էր:

1880 և 1890 թվականների միջև ընկած ժամա-

1) Գեղն առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ 1914—1918 թվականներին սոցիալ-շովինիստ դարձավ: — Վ. Պ.

նակաշրջանում բոլոր յերկրներում բանվորական շարժման արագ ծավալումը, մի շարք յերկրներում, մասնավորապես Ֆրանսիայում սոցիալիստական բանվորական կուսակցությունների առաջցումը, բանվորական շարժման ծավալումը Գերմանիայում՝ բիսմարկյան արտակարգ որենքին հակառակ, պայմաններ ստեղծեցին սոցիալիստական շարժման միջազգային միավորման համար: 1889 թվին Փարիզում գումարվեց զանազան յերկրների սոցիալիստական կազմակերպությունների կոնգրես և ստեղծվեց Անտերնացիոնալը:

Կլարա Յետինը մեծ մասնակցություն ունեցավ միջազգային կրնգրեսի նախապատրաստման մեջ: Գերմանական սոցիալ-դեմոկրատական մամուլում տպագրվող իր բազմաթիվ հոդվածներում նա Գերմանիայի առաջավոր բանվորների ուշադրությունն եր հրավիրում գեպի այդ կոնգրեսը: Նա անձնապես մասնակցում եր կոնգրեսի աշխատանքին՝ վորպես «Սոցիալ-դեմոկրատ» թերթի աշխատակից: Շնորհիվ այն բանի, վոր Կլարան մեծ ընդունակություններ ուներ լեզուների ուսումնասիրման գործում (բացի իր մայրենի՝ գերմաներեն լեզվից, նա տիրապետում եր Փրանսերենին, անգլիերենին և խոալերենին), նա մեծ ոգնություն ուներ կոնգրեսին՝ վորպես հիանալի, քաղաքականապես վորպելի թարգմանչուհի: Նա կոնգրեսում հանդես յեկավ մի ճառով, վորը նախերդանք հանդիսացավ նրա ամբողջ կյանքի մեծ գործի համար: Նա ճառ առաց կանանց մարդու մասին գիտական մասնակից կանանց պարագաների մասին մասնական շարժում կազմակերպելու մասին:

Իր այդ ճառով նա պահանջում եր կանանց լիակատար իրավահավասարություն քաղաքական և տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում: Նա ծավալեց կանանց պարագաների մարդու մասին մասնական շարժում կազմակերպելու մասին:

Կլարա Յետինի այդ առաջին յելույթը մի-

ջազբային թատերաբեմում առիթ հանդիսացավ, վոր նա ծանոթանալ գիտական սոցիալիզմի հիմնադիրներից մեկի՝ Ֆրիդրիխ Ենդելսի հետ: Ենդելսը բարեկամության մեջ և ջերմ զգացմունք ել տածում դեպի Կլարա Ֆետկինը: 1889 թվի մայիսի 16-ին Պոլ Լաֆարդին ուղղած իր նամակում Ենդելսը գրում է.


«Կլարա Ֆետկինը մի հոյակապ հողված ե գրել Բեռլինի «Տրիբունա»-յի համար... Յեթ մենք գեպքերի այդ ճշգրիտ շարադրումը գիտենայինք յերեք ամիս առաջ, մենք շատ բան կշահեյինք»:

Այդ և ուրիշ շատ բարձր գնահատականներ նշեցին Կլարայի աշխատանքի սկիզբը միջազգային սոցիալիստական շարժման մեջ: Նրա գործունեյության վերջը պսակվեց Մարքսի և Ենդելսի գործի մեջ ժառանգործների և այդ գործը շարունակողների՝ Լենինի և Ստալինի հետ ունեցած բարեկամությամբ:

Կլարա Ֆետկինը մինչև իմպերիալիստական պատերազմը մասնակցել է II Ինտերնացիոնալի բողոք կոնդրեսներին: Նա Կանանց առաջին միջազգային քարտուղարության հիմնադիրն ու ղեկավարն եր: 1910 թվին II Ինտերնացիոնալի Կոպենհագենի կոնդրեսում նա առաջարկեց ամեն տարի կատարել կանանց միջազգային որը և ինքը կարմակերպեց նրա կատարումը:

Կլարա Ֆետկինը նախապատերազմյան Ինտերնացիոնալի կոնդրեսներում վճռականորեն հանդես էր գալիս ոպորտունիզմի դեմ:

1907 թվին, II Ինտերնացիոնալի Շտուտգարտի կոնդրեսում, վորտեղ Լենինն անողոք պայքար եր մզում ոպորտունիզմի դեմ՝ հատկապես ոպորտունիան և դաշտային հարցերում, Կլարա Ֆետկինը պաշտպանում եր Լենինին: Կոնդրեսի հանձնաժողովի նիստերից մեկում՝ ընտրական որենքի հարցի



1893 թ.

Կլարա Ֆետկինը (Աննից ինքնական պատճեն) Ենդելսը (Ճամփակական պատճեն) Հանդելսը (Ճամփակական պատճեն)



Կլարա Ցետկին

շուրջը նա խստորեն հանդես յեկավ ավատրիական սոցիալ-դեմոկրատիայի դեմ, վորն ոպորտունիստական նկատառումներով հրաժարվեց կանանց ընտրական իրավունքների համար պրոպագանդա մղելուց: Ավատրիական սոցիալ-դեմոկրատական կուսակցության զեկավար Վիկտոր Ագլերը չափից դուրս գրգոված տոնով հանդես յեկավ այդ մեղադրանքի դեմ: Սակայն նրա յելույթը չշփոթեցրեց կլարա Ցետկինին: Նա շարունակում էր տնդել, վոր ինտերնացիոնալը պարտադրի բոլոր կուսակցություններին, յելներով սկզբունքային նկատառումներից, պայքար մղելու տղամարդկանց և կանանց հավասար ընտրական իրավունքի համար:

Հետեւ Ցետկինը շարունակ վճռականորեն պաշտպանում էր մարքսիստական սկզբունքային դիրքավորումները: Իր կյանքի անցած ուղու ընթացքում նա իդեոլոգիական խլամից ազատվելու քիչ առիթներ չի ունեցել, մինչեւ վոր լիովին յուրացրել ելենինիզմը: Նա ունեցել ել՝ տատանումներ, և՝ սխալներ: Սակայն ոպորտունիզմի դեմ մղած իր բազմաթիվ տարիների պայքարից նա այնուամենայնիվ դուրս յեկավ վորպես բոլեկի, վորպես Լենինի հավատարիմ կողմնակիցն ու աշեկերտը:

ԿԱՆԱՆՑ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

Գերմանական մի արդյունաբերական քաղաքի բանվորական թաղամասում ժողովրդական ժողով եր նշանակված: Բազմաթիվ բանվորներ եյին դնում դեպի ժողովի վայրը: Կապույտ մունզիրներով և հին ձևի սաղավարտներով վոստիկանները ժողովն սկսվելուց առաջ շրջապատել եյին ամբողջ շենքը: Վոչ վոք համոզված չեր, վոր ժողովը կկայանա, վախենում եյին, թե վոստիկանությունը վերջին բոլեյին զեկուցողին կրոնի և չի թողնի գահին մտնելու:



Բազմության հետ միասին գեղի ժողովատեղն էր զնում հասարակ հագուստով մի կին, յերկու փոքրիկ տղաների ձեռքից բոնած: Վոչ մի վոստիկան ուշադրություն չդարձրեց նրա վրա, և նա դահլիճ մտավ: Դա կլարա Յետկինն էր, գեկուցողը: Նա յերեխաներին իր հետ եր վերցրել հենց նրա համար, վոր մոլորության մեջ գցեր վոստիկանությանը: Յեկ այդ հնարագիտության չնորհիվ նըրան հաջողվեց յելույթ ունենալ ժողովում՝ բանվորների և բանվորուհիների առաջ:

Կլարա Յետկինի կյանքում, եմիգրացիայից վերադառնալուց հետո, շատ են յեղել նման ժողովներ, վորտեղ նա հարկադրված է յեղել մեծ պայքարի մեջ մտնել վոստիկանության հետ, վորպեսզի դումարի և անցկացնի այդ ժողովները:

1890 թվականին գերմանական ռայխստագործական գրաժանքեց յերկարացնել «սոցիալիստների գեմ որենքի» ժամկետը, վոր լրանում եր հոկտեմբերին: Բանվորական շարժումը, այդ որենքին հակառակ՝ ուժեղանում և աճում եր: Բուրժուազիան պետք է ընդուներ, վոր վոչ մի որենքով չեր կարելի կասեցնել այդ շարժումը: «Յերկաթյա կանցլեր» Բիումարկը բանվորական մասսաների ձնշման տակ ըստիպված եր նահանջել: Գերմանիա վերադարձած եմիգրանտների մեջ եր զտնվում նաև կլարա Յետկինը. նրա ամուսինը մեռել եր եմիգրացիայի մեջ:

Կլարա Յետկինը ձեռնամուխ յեղավ գերմանացի պրոլետարուհիներին դասակարգային պայքարի մեջ ներդրավելու գործին: Նա Գերմանիայում կանաց շարժման գլուխ անցավ: Այդ գործի ճանապարհին կլարայի առաջ մեծ դժվարություններ կային կանգնած: Ռեակցիոն որենսդրությունը վոչ միայն հրաժարվում եր կանաց ընտրական իրավունքներ տալ, այլև արգելում եր նրանց քաղաքական կազմակերպությունների մեջ լինելը և քաղաքական ժողովներին մասնակցելը: Վոստիկա-

նական չինովնիկներն իրավունք ունեյին իրենց հայեղողությամբ քաղաքական հայտարարել ամեն մի ժողով, վորտեղ նրանք նկատում եյին կանաց, կարող եյին ցըել այդ ժողովները և կանաց հեռացնել դահլիճից:

Այդ դրությունը կին-պրոլետարներին հարկադրում եր զանազան լեզուներ գտնել քաղաքական լուսավորության և միավորման համար: Գոթայում զումարված կուսակցության համագումարում (1896 թ.) կլարա Յետկինի առաջարկությամբ վորոշում ընդունվեց լիազորների ինստիտուտ ստեղծել կանաց մեջ տարվող աշխատանքի զեկավարման համար:

Բուրժուազիայի կին ներկայացնեցիները, վոր հանդես եյին գալիս հանուն կանաց իրավունքների, ոգտագործում եյին կանաց լիազատար իրավազրկությունը, վոր գոյություն ուներ Գերմանիայում, վորպեսզի փորձեն ավաղել բուրժուական տիկինների և պրոլետար կանաց միջև յեղած գառակարգային հակասությունները: Նրանք ասում եյին թե անհրաժեշտ է մորիկիզացիայի յենթարկել բոլոր կանաց, անկախ նրանց դասակարգային պատկանելությունից, տղամարդկանց արտօնությունների գեմ պայքարելու համար: Այդպիսի լոգունզով եր տարվում նրանց խաղալիքային պայքարը իրավահավասարության համար:

Կլարա Յետկինն անհաշտ թշնամությամբ եր վերաբերվում զեպի այդ փորձերը: Կանաց հարցում նա պրավում եր միակ ձշմարիտ, մարքսիստական դիրքը, վոր ոռուական բանվորական շարժման մեջ պաշտպանում եր Ն. Կ. Կրուպսկայան: Ընկեր Կրուպսկայան 90-ական թվականների վերջերին «Սարլինա» կեղծանունով լույս ընծայեց իր առաջին բրոշյուրը այդ հարցի մասին: Այդ բրոշյուրում նա պահանջում եր, վոր պրոլետարական կանացի հեռանան կանաց բուրժուական շարժումից,

պահանջում եր, վոր նրանց մտցնեն պրոլետարական գասակարգային պայքարի մեջ։ Այդ նույն գիծն եր պաշտպանում նաև Կլարա Ֆեռկինը։

Գերմանական սոցիալ դեմոկրատիայի՝ Մանհայմում գումարված համագումարում (1906թ.) կանանց ընտրական իրավունքների մասին տված իր գեկուցման մեջ նա ծավալեց մի պարզորոշ ծրագիր, վոր հիմնված եր կանանց սոցիալիստական շարժման և կանանց բուրժուական «եմանսիալացիայի» սկզբունքային տարրերության վրա։

«Պրոլետարուհին... միայն իր անտեսական և կուլտուրական կենսական շահերի պաշտպանության համար չե, վոր ընտրական իրավունքի կարիք ունի. նա ընտրական իրավունքի կարիք ունի վո՞չ թե իր գասակարգի տղամարդկանց դեմ պայքարելու, այլ կապիտալիստների դասակարգի դեմ պայքարելու համար։ Այդպիսով նա չի պահանջում սոցիալական ուժորմներ՝ բուրժուական հասարակությունը և կապիտալիստական անտեսական կարգերը պաշտպանելու համար։ Վոչ, մենք քաղաքական հավասար իրավունքներ ենք պահանջում տղամարդու հետ, վորպեսզի հասարակորություն ունենաք առանց որենսդրական սահմանափակության մասների մասնակցել այդ հասարակության տապալման և վոչնչացման գործին»։

Կլարա Ֆեռկինի պայքարը՝ վորպես կանանց սոցիալիստական շարժման ղեկավարի պայքար, դերմանական բանկորական շարժման պատմության լավագույն եջերի թվին ե պատկանում։ 1891թվին Կլարա Ֆեռկինը դերմանական սոցիալ-դեմոկրատիայի «Գլայխհայտ («Հավասարություն») կանանց ժուռնալի խմբագիր, վորը և նա ղեկավարում եր 26 տարի շարունակ, մինչև 1917թվականը։ Նրա ղեկավարությամբ այդ որդանը դարձավ բանվորուհիների, պրոլետարական կանանց ու

ժայրերի խոկական խոսափողը, մասսայական հեղափոխական պայքարի որդանը։

Բազմաթիվ ժողովներում Կլարա Ֆեռկինը մորթիվացիայի յե յենթարկում պրոլետարական կանանց, շարունակ նորանոր ճեղքեր առաջացնելով այն պատճեշի մեջ, վոր կանանց միլիոնավոր պրոլետարական մասսաներին անջատում եր հեղափոխական շարժման հզոր հոսանքից։ Այդ լայն և անդուրագիտացիային զուգակցվում եր տեսական հստակության համար, մարքսիստական թեորիան կանանց շարժման մեջ արմատավորելու համար մըդ-վող մշտական պայքարը։ Բերենք մի փոքրիկ եպիգոտ, վորը պայծառ լույս և սփոռում Կլարայի հեղափոխական անհաշտության վրա այդ հարցում։

Բուրժուազիայի կին ներկայացուցիչներին, «եմանսիպացիայի յենթարկված» տիկիններին, վորոնք պայքարում եյին կանանց իրավունքների համար, հաջողվեց համոզել բերելի և վիլհելմ Լիբնեխտի կանանց՝ ստորագրելու իրենց կոչերից մեկը։ Կլարան անմիջապես գրավոր ճեռվ արտահայտեց իր բողոքը այդ բանի դեմ։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության կենտրոնական որդան «Ֆորվերտը» հրաժարվեց տպագրել նրա նամակը։ Կլարան չափանիշեց, վճռական պայքար մզեց և վերջի վերջու հասավ այն բանին, վոր կուսակցության կենտրոնական որդանն ստիպված յեղավ տպագրելու նրա բողոքը «ղեկավար ընկերների կանանց» վարձունքի դեմ, մի վարձունք, վոր խախտել եր կարությունը և հակասում եր կուսակցության գաղահությունը։

Ֆրիդրիխ Ենգելսը Վիկտոր Աղերին ուղած իր նամակում յեռանդուն կերպով հավանություն ե տվել նրա հեղափոխական զգաստությանը։ «Բրագոն, Կլարա», դրել ե նա։

ՈՊՈՐՏՈՒԽԵԶՄԻ ԴԵՄ ՄՂՎԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներսում ոպորտունիստական տարրերի գեմ մղված կոկվներում կլարա Ցետկինը կանգնած էր ծայրահեղ ձախ թեռում։ Նա հենց սկզբից ամենայեռանդուն կերպով պայքարում էր Մարքսի-Ենգելսի ուսմունքի ռեվիզիայի փորձերի և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը բուրժուական ձեռնասուն ոսլողիցիոն կուսակցության վերածելու դեմ։ Նա խստորեն դատապարտում էր սոցիալ-դեմոկրատական առաջնորդների տատանումներն ու ոպորտունիստական յերերումները։ Լենինն ընդդում էր կլարա Ցետկինի գործունեյության այդ կողմի կարեռությունը։

Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի 1894 թ. ֆրանկֆուրտյան համագումարում ագրարային Հարցի շուրջն ընտրվեց մի հանձնաժողով, վորը ունիվերժինիստներ Դավիդի և Ֆորմարի ճնշման տակ մշակեց միանդամայն վոչ մարքսիստական աղքարային ծրագիր։ Կուսակցության՝ Բրեսլավում գումարված համագումարը (1895 թ.) մերժեց այդ նախագիծը. դրա գեմ խստորեն հանդես յեկավ ֆրիդրիխ Ենգելսը՝ 1894 թ. նոյեմբերի 12-ին «Ֆորվերտ»-ում հրապարակված իր հայտարարությամբ։ Մինչդեռ Ավգուստ Բերելը և Վիլհելմ Լիբլինեխտն ազբարային հանձնաժողովում ձայն տվին այդ վոչ մարքսիստական նախագծի ոգտին և պաշտպանում էին այդ նախագիծը կուսակցության համագումարում։ Կլարա Ցետկինը խստորեն հանդես յեկավ այդ կապակցությամբ։ Իր յելույթի մեջ նա հետեւյալ մեջբերումը կատարեց Գեոթեյի «Ժառաւա»-ից։

«Դառն է հիմա իմ հոգում,

Վոր քեզ տեսնում եմ այդ շրջանում»։

1905—1907 թվականների ուսուական առաջին հեղափոխությունը, վոր ամբողջ աշխարհի բանվո-

րական շարժման առաջ գրել եր հեղափոխական պայքարի պրոբլեմները նոր պայմաններում, յերբ «1872—1904 թվականների խաղաղ ժամանակաշրջանն անվերադարձ կերպով հավիտենականության դիրկն անցավ» (Լենին), առանձնահատուկ կերպով որեց սկզբունքային պայքարը գերմանական բանվորական շարժման մեջ, սոցիալ-դեմոկրատիայի շարքերում։ Կլարա Ցետկինը, վորը գեռ իր յերիտասարդ տարիներին Ռուպ Ցետկինի միջոցով մատեցել էր Ռուսաստանի հեղափոխական շրջանների հետ, անմիջապես ուսուական հեղափոխության խանդավառ պրոպագանդիստը դարձավ։ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության կենտկոմի ուղղակի արգելմանը հակառակ նա կազմակերպեց բազմաթիվ ժողովներ՝ նվիրված ուսուական բանվորների ու գյուղացիների հերոսական պայքարին։ Գերմանիայի աշխատավորներին նա պարզաբանում էր մասայական-քաղաքական գործադուլի՝ վորպես հեղափոխական պայքարի հզոր գործիքի նշանակությունը։ Նա իր «Գլուխայտ» ժուռնալի շուրջը մորիլիզացիայի յեր յենթարկում բոլոր ուժերը, վորպեսզի այդ հեղափոխական փորձն արմատավորի Գերմանիայի սոցիալստական շարժման պահտիկայի մեջ։ Նա այն ժամանակ ֆրանց Մերինդին գրել է.

«... Յեթե յես կարողանայի հետեւ իմ զգացմունքներին, այժմ յես Ռուսաստան կուղեվորվեյի»։

Մասայական գործադուլի հարցի շուրջը տեղի ունեցած դիսկուսիան քաղաքական դիմերենցիացիա մտցրեց սոցիալ-դեմոկրատիայի շարքերում։ Այնու բացահայտորեն հանդես յեկան մարքսիզմի գեմ։ Յենտրիստները, վորոնց կողմն այն ժամանակ արդեն անցել եր կառցիկին, իրենց գիրքերը մեկը մյուսի հետեւից հանձնում էին համաձայնողականներին։ Աջ ոպորտունիզմի և յենտրիզմի գեմ մղվող

պայքարում վորպես հատուկ խումբ առանձնացավ կուսակցության ձախ թեր՝ Ռոզա Լուքսեմբուրգի և Կլարա Ֆետկինի գլխավորությամբ։ Ճիշտ է, գերմանական ձախ սոցիալ-դեմոկրատների այդ խումբը, վորոնցից հետագայում կազմվեց «Սպարտակ Միությունը», ողորոտունիզմի դեմ մղած պայքարում ունեցած պատմական մեծ ծառայությունների հետ միասին՝ ունեցել ենակ քաղաքական ու տեսական շատ լուրջ սխալներ։ Այդ սխալները, ինչպես ասում են ընկեր Ստալինը, բզիսել են նրանից, վոր ձախ սոցիալ-դեմոկրատների խումբը «... գեռես չի ազատագրվել մենշևիկյան բագաժից»¹⁾։ Ա ինտերնացիոնալի մեջ յեղած միակ խըմբավորումը, վոր անողոք պայքար եր մղում տմեն վույնի ոպորտունիզմի դեմ, իսկական մարքսիստական խմբավորումը, վոր շարունակում եր ավելի հեռու զարգացնել մարքսիստական թեորիան, — ուստական բոլշևիկներն եյին կազմում։

Հարկավոր են նշել, վոր Կլարա Ֆետկինը վորոշ հարցերում ավելի պարզորոշ դերք եր դրավում, քան մնացած ձախերը, ինչպես որինակ ուստական հեղափոխության զնահատման մեջ և ագրարային հարցում։ Սակայն այն ժամանակ նա ևս դեռ չեր հասկանում նոր տիպի կուսակցության կազմակերպման անհրաժեշտությունը, մի կուսակցություն, վոր ստեղծեցին Լենինը և Ստալինը, — բուշելիկների կուսակցությունը։

Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ ոպորտունիզմի աճումը ազգանշան եր տալիս միջազգային համերաշխության սկզբունքների նկատմամբ Շայդեմանների կողմից նախապատրաստվող գավաճանության մասին։ Այդ աճումն այն ժամանակ արգեն վկայում եր պատերազմի դեպքում կուսակցու-

թյան լիակատար անմարտունակության մասին։ Համաշխարհային պատերազմի սկսվելուց զեռ առաջ Կլարա Ֆետկինն ոգտագործում եր ամեն մի հնարավորություն, վորպեսզի մասսաներին բացատրըի նրանց սպառնացող վասնդը և նրանց նախապատրաստի անհրաժեշտ հեղափոխական գործողությունների համար։ Համաշխարհային պատերազմի սկսվելուց յերեք ամիս առաջ նա Բեռլինում, սոցիալ-դեմոկրատական կուսակցության կենտրոնի կամքին հակառակ՝ բողոքի միջազգային մեծ միտինդ գումարեց պատերազմի սպառնալիքի դեմ։

«Գրայիսհայտ» ժուռնալում նա աշխատավորներին նախազգուշացնում եր ժողովուրդների վերահս սպանդի մասին և գործողության կոչ եր անում նրանց։ Պատերազմի սկզբից ընդամենը միքանի որ առաջ՝ 1914 թ. հուլիսի 26-ին սոցիալ-դեմոկրատական կուսակցության մարզային համագումարը Վյուրտեմբերգում միաձայն ընդունեց Կլարա Ֆետկինի մտցրած առաջարկությունն այն մասին, վոր անհրաժեշտ ե բոլոր ուժերը գործադրել խաղաղության պահպանման համար։

Մի քանի որից հետո, 1914 թ. ոգոստոսի 1-ին բոնկեց համաշխարհային իմպերիալիստական պատերազմի բոցը։ Խայիստագի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան 1914 թ. ոգոստոսի 4-ին գվեարկեց ուղմական վարկերի ոգտին։ Այդ նշանակում եր դավադանել պրոլետարական ինտերնացիոնալիզմի ամենաարբական սկզբունքներին, ինտերնացիոնալիզմ, վորի գործին սոցիալ-դեմոկրատական հանդիսավոր կերպով խոստանում եր ծառայել իր ընդունած բազմաթիվ բանաձեռների ու վորոշումների մեջ։

Ոգոստոսի 5-ին Ռոզա Լուքսեմբուրգը մոտ 300 հեռագիր ուղարկեց ձախ տրամադրված բոլոր ակտիվիստներին, վորոնց գիտեր ինքը, նրանց հրավիրեց Բեռլինում գումարվելիք ոպոզիցիայի

¹⁾ Ստալին, «Լենինիզմի հարցերը», հջ 472, Պետքաղհրատ, 1938 թ.

կոնֆերանսին։ Իրենց համաձայնությունը տվուք սակավաթիվ մասնակցողների մեջ եր նաև կլարա Ֆետկինը։ Ռոգա Լուքսեմբուրգի, Կարլ Լիբենեխտի և Թրանց Մերինգի հետ միասին նա բողոք հրապարակեց այդ անորինակ դավաճանության դեմ։ Նրանք միասին ստորագրեցին այն բաց նամակը, վոր գետեղվեց արտասահմանյան սոցիալիստական մամուլում և հանդիսացավ առաջին ակտը Գերմանական ձախերի անվեհեր պայքարի, վոր մը զում եյին նրանք ընդդեմ ժողովուրդների սպանդի, ընդդեմ իմպերիալիստական պատերազմի։

1914 թ. գեկտեմբերին ուղղմական վարկերի հարցի քվեարկման ժամանակ Կարլ Լիբենեխտը ուսյիստագում մի համարձակ հայտարարություն արեց, վոր ուղղված եր ուսյիստագի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի ուղղմական քաղաքականության դեմ։ Նա բացահայտորեն դեմ քվեարկեց ուղղմական վարկերին։ Կառավարությունն անմիջապես արշավանք սկսեց ձախերի դեմ։ Կարլ Լիբենեխտին բանակ կանչեցին, վորպեսդի նրան զրկեն քաղաքական աշխատանքը շարունակելու հնարավորությունից։ Ռոգա Լուքսեմբուրգը ձերբակալվեց և բանտում պետք է մնար նախորոք կայացված դատավճարի համաձայն։

Ռոգայի ձերբակալումից հետո կլարան շարունակում է ոպոզիցիայի կազմակերպման և կին սոցիալիստների՝ Բեռնի միջազգային կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքները։

Այդ ամբողջ աշխատանքը մեծ մասամբ անլեզարկալ ձեռվ եր կատարվում։ Ի միջի այլոց, Կլարա Ֆետկինն անլեզարկ կերպով անցավ Հոլլանդական ահմանը, վորպեսդի հնարավորություն ունենար կապվել արտասահմանյան բոլոր կազմակերպությունների հետ՝ Բեռնի կոնֆերանսի գումարման հարցի շուրջը։

Կլարային, — այդ ինդրի արդեն հաջող լու-

ծումից հետո, — ձերբակալում են և արտաքսում Հոլլանդիայից։

Սակայն վո՞չ մի հետապնդում չեր կարող դադարեցնել ձախերի պայքարը պատերազմի դեմ։ 1915 թ. ապրիլի 15-ին լույս տեսավ «Բնտերնացիոնալ» ժուռնալի առաջին համարը, մի շարք հոգվածներով, վորոնք ուղղված եյին պատերազմի և սոցիալ-դեմոկրատիայի ռազմական քաղաքականության դեմ։ Ռազմական իշխանություններն անմիջապես արդելցին ժուռնալի լույս ընծայումը և գաժան պատիժներով եյին սպառնում նրա տարածման համար։

1915 թվին կլարա Ֆետկինը Շվեյցարիայում կազմակերպեց կանանց միջազգային սոցիալիստական կոնֆերանս՝ իմպերիալիստական պատերազմի դեմ։

Զնայած այն անկեղծ և կրքոտ ատելությանը, վոր տածում եր Կլարա Ֆետկինը պատերազմի հրձիգների և նրանց սոցիալ-շովինիստական գործակիցների նկատմամբ, նրա գիրքն այդ կոնֆերանսում և նրա առաջարկած բանաձեռ ցույց տվին գերմանական ձախ սոցիալ-դեմոկրատների իդեոլոգիական մեծ թուլությունը և տատանումները՝ պատերազմի դեմ հեղափոխական պայքարի գծի մշակման գործում։ Փոխանակ հեղափոխական, մասսաներին կապիտալիստական կարգերի դեմ մուրիկացիայի յենթարկելող լողունդի՝ «իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի», ձախ սոցիալ-դեմոկրատներն առաջարկեցին պացիֆիստական, մասսաներին պասսիվության յենթարկելու մի լոգունդ՝ «Պայքար խաղաղության համար»։ Բոլցեկիների կին ներկայացուցիչները դեմ եյին դուրս գալիս այդ բանաձեռին։ Լենինը խատորեն քննադատեց Կլարա Ֆետկինի այդ գեռես անհետեղողական դիրքը։ Կլարա Ֆետկինը այդ սուր, բարեկամական քննադատության ազդե-

ցության տակ սկսեց արագորեն վերացնել իր սը-
խալները:

Կայզերի կառավարությունը «նախազգուշա-
կան ձերբակալմամբ» պատասխանեց պատերազմի
վեմ Կլարա Ցետկինի մղած պայքարին. 60-ամյա
Կլարա Ցետկինը բանտարկվում է:

Բանտից ազատվելուց հետո Կլարա Ցետկինն
անմիջապես վերսկսում է իր անլեզարդ հեղափոխա-
կան աշխատանքը:

Պատերազմի առթիվ հրատարակված կոչի
մեջ, 1915 թ. ովոսառուին, Լենինը մեծ հարգանքով
եր խոսում Կլարա Ցետկինի մտաին:

«Գերմանիայում տասնյակ և հարյուրավոր
լավագույն սոցիալիստներ, այդ թվում նաև
կանանց բանվորական շարժման հայտնի ներ-
կայացուցիչ Կլարա Ցետկինը, գերմանուկուն
կառավարության կողմից բանտերն են նետ-
ված՝ հեղափոխական վոգով պրոպագանդ
մղելու համար»:

Քայլ առ քայլ հեղափոխական գիծը—իմպե-
րիալիստական պատերազմը քաղաքացիական պա-
տերազմի վերածելու գիծը, վոր պաշտպանում
եր Լենինը համաշխարհային իմպերիալիստական
պատերազմի առաջին որից, սկսեց հաղթող հան-
դիսանալ գերմանական ձախ սոցիալ-գեմոկրատ-
ների մեջ, վորոնք լենինյան դիրքերին մոտենում
ելին տատանումներով, պայքարով, աստիճանա-
բար հաղթահարելով իրենց սխալ տեսակետները:

Կարլ Լիբկնեխտը մասսաներին գիմեց հետե-
լյալ կոչով. «Կոչ թե քաղաքացիական խաղաղու-
թյուն, այլ քաղաքացիական պատերազմ,— այս-
պես ե լոգունդը»: 1916 թ. հունվարի 1-ին մի
խումբ ընկերներ, վորոնք իրենց հրատարակած
ժուռնալի անունով իրենց «Բնաերնացիոնալ» խըմ-
բակ ելին անվանում, Բեռլինում կոնֆերանսի հա-
մաքվեց և վորոշեց իր կազմակերպությունն ան-

վանել «Սպարտակի Միություն» անունով: Կլարա-
Ցետկինը հսարավորություն չուներ մասնակցելու
կոնֆերանսին: Սակայն նա ակտիվ կերպով մաս-
նակցում էր այդ կոնֆերանսի ընդունած՝ «միջազ-
գային սոցիալ-գեմոկրատիայի խնդիրների մասին
գիրեկակիների» մշակմանը, գիրեկակիները, վո-
րոնք «Սպարտակի Միության» ծրագիրը դարձան:
Նա ակտիվ կերպով մասնակցում էր նաև խմբակի
խնդիրմացիոն՝ որգանի՝ «Սպարտակի նամակների»
հրատարակմանը, մի որգան, վորի հրատարակվե-
լը վորոշված էր կոնֆերանսի կողմից:

1916 թ. մայիսի 1-ին «Սպարտակ» խմբակը
Բեռլինի բանվորներին կոչ արեց բացահայտ մար-
տական ցույցի դուրս գալ իմպերիալիստական
պատերազմի դեմ: Բեռլինի կենտրոնում, Պոտս-
դամյան յեռուն հրապարակում հավաքվել եր Կո-
ղախ հեղափոխական բանվորների բազմությունը:
Կարլ Լիբկնեխտը հետեյալ լոգունդները նետեց
հավաքվածներին՝ «Կորչի՝ կառավարությունը»,
«Կորչի՝ պատերազմը»: Վոստիկանները ձերբակա-
լեցին Կարլ Լիբկնեխտին: Ռազմական դատարանը
գործը յերկու անգամ լսելուց հետո նրան դատա-
պարտեց յերկարաժե ազատազրկության և տա-
ժանակիր բանտարկության:

Մայիսեկյան այդ ցույցը և Կարլ Լիբկնեխտի
կոչը կենդանի արձագանք գտան Գերմանիայի
պրոլետարների մեջ: Ռազմական գործարաններում
բարձրացավ մասսայական գործադուների առա-
ջին ալիքը: Լիբկնեխտի խոսքերը նույնիսկ մինչեւ
իրամատները հասան:

Կլարա Ցետկինն անդուլ պայքար եր մղում
մասսաների մեջ հեղափոխական լոգունդների տա-
րածման համար, հատկապես Վյուրտեմբերգում,
վորտեղ ապրում եր նա: Սոցիալ-գեմոկրատական
կուսակցության կենտրոնը հանեց նրան «Գլայխ-
հայտ» ժուռնալի խմբագրի պոստից, կարծելով,

թե դրանով կփակի նրա բերանը։ Սակայն խի-
զակի հեղափոխական կնոջ ձայնը չլուց։

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Յերբ 1917 թվի նոյեմբերի 7-ին Լենինի նշա-
նավոր դիմումը՝ «Բոլորին, բոլորին, բոլո-
րին...» ամբողջ աշխարհի աշխատավոր մասսա-
ներին տեղյակ դարձեց Հոկտեմբերյան Սոցիա-
լիստական Մեծ հեղափոխության կատարման և
Ռուսաստանում Խորհրդային իշխանության հաս-
տաման մասին, կլարա Յետկինը, գերմանական
բանվորական շարժման սակավաթիվ առաջնորդ-
ներից մեկը, անմիջապես հրճվանքով ու անվերա-
պահորեն հավանություն տվեց բոլշևիների մեծ
յելույթին։ Յեվ այդ պատահական չեր։ Մենք ար-
դեն մատնանշել ենք, վոր կլարա Յետկինը վաղուց
ի վեր ամենասերտ կապեր եր պահպանում ոռւսա-
կան հեղափոխականների հետ։ Դեռևս գերմանա-
կան սոցիալ-դեմոկրատական կուսակցության
Դրեզդենի համագումարում, 1903 թվին, նա բոցա-
չունչ արտահայտություններով հավանություն
տվեց ցարական Ռուսաստանում տեղի ունեցող հե-
ղափոխական շարժմանը։

Կլարա Յետկինն իրեն սերտորեն կապված էր
դում Ռուսաստանի՝ կանանց սոցիալիստական
շարժման կին զեկավարների հետ։ Յերբ 1913 թը-
մին, չնայած ցարական դաժան տեռորին, Ռու-
սաստանում առաջն անգամ կատարվեց կանանց
միջազգային որը, կլարա Յետկինը վողջունեց
այդ հեղափոխական յելույթը։ Ռուսաստանում
կատարվող, կանանց յերկրորդ Միջազգային որվա
առթիվ նա հետեւյալ վողջույնն ուղարկեց։

«Վողջունում եմ ձեր անվեհեր վորոշումը՝
կանանց միջազգային որը կազմակերպելու
մասին։ Վողջունում եմ ձեզ նրա համար, վոր
չեք կորցնում ձեր արիությունը և ձեռքերդ

ծալած չեք նստում... Մենք ձեզ հետ ենք
հոգով ու մարմնով։»

Յեվ ահա այժմ կլարա Յետկինն առիթ ունե-
ցավ վկա լինելու հսկայական իրադարձությանը—
Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխու-
թյանը։ Բուրժուական մամուլն աշխատում եր ա-
մեն կերպ ազավազել այդ իրադարձություննե-
րը, —չտեսնված կեղծ լուրեր եր տարածում բոլ-
շևիների մասին, իսկ ուզմական գրաքննչու-
թյունը մասսաներից թագցնում եր ճշմարտացի
լուրերը Հոկտեմբերյան սոցիալիստական հեղա-
փոխության մասին։ Սակայն կլարա Յետկինը իս-
կապես համոզված էր, վոր բոլշևիները Լենինի
դիմուրությամբ հաջողությամբ ընթանում են
միակ ճշմարիտ ճանապարհով—ոռւսական բան-
վորներին ու գյուղացիներին կապիտալիստների
ու կալվածատերերի շահագործումից զինված ա-
պատամբությամբ ազատագրելու ճանապարհով։

Այն ժամանակ, յերբ Ռոզա Լուֆսեմբուրգը,
վոր բանտումն եր գտնվում և այնտեղից ազատ-
վել եր միմիայն 1918 թ. գերմանական նոյեմբեր-
յան հեղափոխության չորրդիվ, կոպիտ սխաներ
կատարեց Հոկտեմբերյան հեղափոխության ու
բոլշևիների տակտիկայի գնահատման գոր-
ծում, —կլարա Յետկինը մեծ կրքուությամբ
պաշտպանում եր այն միջոցառումները, վոր կի-
րառում եյին բոլշևիները՝ խորհրդային իշխա-
նության անվտանգությունն ապահովելու համար։
«Լայպցիգեր Փոլկոցայտունգ»-ի («Լայպցիգյան
ժողովրդական թերթ») կանանց հավերժածում,
մի թերթ, վորը կլարա Յետկինի՝ «Դլայլհայտի»
աշխատանքից հեռացվելուց հետո նրա նոր տրի-
բունը գարձավ, կլարա Յետկինը խարազանում եր
Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության
հակահեղափոխական գիրքը, մի կառավարություն,
վորը 1917 թվի հունիսին զնդակարել եր Պետրո-

գրադի բանվորների անզեն ցույցը, ընդհատակ եթ քչել բոլշևիկներին և զազրելի զրպարառության կեղծոտա հոսանքով փորձում եր մասսաներին կարելնը բանցից: 1917 թվի նոյեմբերի 16-ին նա գրում է.

«Պետերբուրգում կատարված հեղափոխությունը և նրա հաղթանակը— այդ բոլշևիկների հետևողականորեն կայուն և կյանքում կիրառվող սկզբունքային ու տակտիկական հայցքների հաղթանակն և հանդիսանում»:

«Պատմության մեջ գեռևս չաեսնված խիզախ գրոհով բոլշևիկները հասան իրենց նպատակին. կառավարական իշխանությունը Խորհուրդների ձեռքումն է գտնվում»:

Ռազմական գրաքննչությունն ամեն կերպ խանգարում եր Կլարային բացահայտորեն արտահայտելու իր գրական վերաբերմունքը Ծուսաստանում տեղի ունեցած սոցիալիստական հեղափոխությունն նկատմամբ, Սահմանադիր ժողովի ցրման նկատմամբ, Բրեստ-Լիտովսկի հաշտության և հակահեղափոխության ճնշման նկատմամբ: Սակայն Կլարա Ֆետինը համարյա միշտ ել կարողանում եր ուղիներ և միջոցներ գտնել իր կարծիքը արտահայտելու համար: Յերբ 1918 թ. գարնանը Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից անջատված Անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն անլեզարկութեան կոնֆերանս հրավիրեց, Կլարա Ֆետինը կոնֆերանսին դիմեց մի նամակով: Անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցության կենտրոմը նույնիսկ վճռականություն չունեցավ կոնֆերանսում կարգալու այդ նամակը, այլ վորոշեց միմիայն կցել մյուս նյութերին: Այդ նամակում Կլարա Ֆետինը հետեւյալ հարցն է դնում.

«Սոցիալիստական գաղափարի իրավործան համար բոլշևիկների մզած հերոսական պայքարը սկզբանի արգյուք որինակ ծառայի, ուստի ընկերների կողմից կիրառվող սկզբունք-



Բնկերներ կ. Յե. Վորոշիլովը և Կլարա Ֆետինը:
Կարմիր Դրոշի շքանշանի հանձնումը Կլարա Ֆետինին

1927 թ.



Հնկերներ Հանրի Բարբյուսը և Կլարա Յետկինը

1928թ.

ներն ու մեթոդները պետք ե արդյոք ղեկավարություն դասնան սոցիալիստական կուսակցությունների պրակտիկայի համար բոլոր յերկըրներում, վերանայման յենթարկեն այդ յերկըրներում մինչև այժմ կիրառվող սկզբունքներն ու տակտիկան»:

Այդ հարցին Կլարա Յետկինը պատասխանում է բոլշևիկմի անվերապահ, պարզուց ճանաչմամբ.

«Յես վճռականորեն հանդես եյի գալիս բոլշևիկների ոգտին... Իմ կարծիքով՝ պատմությունը լուծեց իշխանությունը խելու նըկատմամբ ուստ բանվորների ու գյուղացիների իրավունքի մասին յեղած թեորետիկ հակածառությունները։ Հոկտեմբերյան հեղափոխության հզոր պատկերը կանգնած ե մեր առաջ և իր չերմ չնչով ասում ե միջազգային պրոլետարիատին. «Յես գոյություն ունեմ, յես պետք ե գոյություն ունենամ։ Հետևեցիք ինձ»։

Բոլշևիկների հեղափոխական սխրագործությամբ վողեվորված՝ Կլարա Յետկինն արդեն 1918 թվականի սկզբին մի նամակ գրեց Լենինին, վորի մեջ նա չերմորեն իր համերաշխությունն ե հայտնում բոլշևիկների հետ։ Լենինն այդ նամակին պատասխանեց մի հայտարարությամբ, թե՝ բոլշևիկները հպարտ են այդպիսի պրոլետարական մարտիկների պաշտպանությամբ։

Լենինը շարունակ մեծ հարգանք ե ունեցել Կլարա Յետկինի նկատմամբ։ Շտուտգարտի կոնգրեսի մասին գրած իր հողվածներում «Պրոլետարի»-ում 1907 թ. նոյեմբերի 2-ին և «Կոլենдарь для всех»-ում՝ 1908 թվին) նա բաղմից հիշատակում ե Կլարա Յետկինի վերաբերմունքը քաղաքական զանազան հարցերի նկատմամբ և մեջբերում ե կատարում «Փլայիսհայտ»-ում տպագրված նրա հոդվածներից։ Կլարա Յետկինի ծանոթությունը Լենինի

Հետ սկսվել ե Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից ավելի քան տաս տարի առաջ. նրանք հանդիպում եյին սոցիալիստական կոնգրես-ներում ու կոնֆերանսներում և այն ժամանակ, չերք Լենինը Մյունիսենում եմիգրացիայի մեջ ել գտնվում:

1920 թվին Կլարա Ֆետկինը Խորհրդային Միություն յեկավ և մասնակցեց Կոմունիստական ինտերնացիոնալի Ահամաշխարհային կոնգրեսի աշխատանքին: Նա ընտրվեց Կոմինտերնի կունաց միջազգային քարտուղարության ղեկավար: Այդ ժամանակից սկսած՝ նա ողտագործում եր ամեն մի համարակորություն՝ ուսումնասիրելու համար Խորհրդային Միության բանվորների ու գյուղացիների կյանքն ու գործունեյությունը և ջերմորեն գողջունում եր սոցիալիստական շինարարության հաջողությունները:

Կլարա Ֆետկինը նույնքան տաղանդավոր գրող եր, վորքան և հսկոր: Իր աշխատությունների մեջ նա սկսում է հմտորեն ոգտագործել անցյալի հարուստ ժառանգությունը՝ պրոլետարական դասակարգային պայքարի շահերի համար: Իր խոսքի և իր գրչի ամբողջ ուժը նա գործադրում է սոցիալիզմի պրոպագանդի համար, սոցիալիզմ, ղեկավարությունը անապարհ բացել եր հաղթական Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը յերկրագնդի մեջ վեցերորդ մասում: Կլարա Ֆետկինի կյանքի և ստեղծագործության վրա խոր ազգեցություն ե թողնում այն հանգամանքը, թե ինչպես Լենինի Ստալինի կուսակցությունը նվաճեց և ամրապնդեց բանվոր դասակարգի իշխանությունը, ինչպես այդ կուսակցությունը մասսաներին տանում է սոցիալիզմի ուղիով, ինչպես նաև լուծեց ԽՍՀՄ-ում ազգային հարցը և խոկական կուտարական հեղափոխության սկիզբը գրեց, և ինչ-

պես լուծեց աշխատավոր կանանց ազատագրման մեծ պրոբլեմը:

Կլարա Ֆետկինը, վորի քաղաքական գործունեյության սկիզբը կապված եր սոցիալիստական շարժման ակունքների հետ, և վորն իր ամբողջ կյանքը տվել է սոցիալիզմի գործին, իր կյանքի մայրամուտին իրականացված տեսավ այն, վորի համար նա պայքարել է շատ տասնամյակներ: Խորհրդային Միությունը նրա խոկական, հարազատ հայրենիքը դարձավ:

Կլարա Ֆետկինը մինչև իր կյանքի վերջին ոքերը հսկայական ուշագրությամբ հետևում եր բոլոր նոր նվաճումներին, սոցիալիզմի շինարարության յուրաքանչյուր հաղթանակին: Դեպի այդ հաջողություններն ունեցած իր վերաբերմունքը նա արտահայտել է հետեւյալ խոսքերով.

«Բնկեր Ստալինի՝ Լենինի մեծ գործը շարունակողի ղեկավարությամբ համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթանակներ են ձեռք բերվել»:

Կլարա Ֆետկինը հիմնալի կերպով հասկանում եր, թե պատմական նիշպիսի խոշորագույն զեր և կատարում ընկեր Ստալինը բոլշևիկյան կուսակցության, խորհրդային շինարարության և համաշխարհային բանվորական շարժման ղեկավարման գործում: Իր մահվանից մի քանի ամիս առաջ Կլարա Ֆետկինն Արխանգելսկոյե գյուղում, վորտեղ ապրում եր նա, արտասանեց իր վերջին ճառը.

«Անկեղծ հարգանքով, — ասում եր նա, — յես վողջունում եմ ընկեր Ստալինին, կոմունիստական կուսակցության ականավոր, հանճարեղ ղեկավարին, վորը հիացմունքի արժանի յեռանդով ու նվիրվածությամբ իր բոլոր ուժերը տալիս և սոցիալիզմի՝ յերեք մեծ առաջնորդների (Մարքսի, Յնգելսի, Լենինի) այդ թանկագին ավանդի իրականացմանը»:

Ֆրիդրիխ Ենգելսի վերջին ժամանակակցիքի և
դործակցի բերանով արտասանված այդ հայտարա-
ռությունը սիմվոլացնում է այն անխղելի կապը,
վոր գոյություն ունի Մարքսի, Ենգելսի և Լենինի
ու նրա դործը շարունակող Ստալինի միջև, վորի
ղեկավարությամբ ԽՍՀՄ-ի աշխատավորները սո-
ցիալիզմն ապագայի նպատակ լինելուց վերածեցին
ներկայի վիթխարի դործի:

ԿՈՄԻՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՏՐԻԲՈՒՆԱ

Միմիայն բոլշևիկյան ղեկավարությունը կա-
րող եր լուծել այն խնդիրները, վոր նոյեմբերյան
հեղափոխությունը դրել եր գերմանական բանվոր
դասակարգի առաջ: Բայց 1918 թվի նոյեմբերի 9-ին
այդպիսի ղեկավարություն գերմանական պրոե-
տարիատը չուներ: Կոմունիստական կուսակցու-
թյան կազմակերպումը վճռական պայման եր այդ-
պիսի ղեկավարության ստեղծման համար: 1918-
1919 թվականների միջև ընկած ժամանակամիջու-
ցում ստեղծվեց Գերմանիայի կոմունիստական կու-
սակցությունը: Սակայն հարկավոր եր դեռ այդ
կուսակցության մեջ ներգրավել բանվոր դասակար-
գի դասակարգայնութեն գիտակից մասը, այդ կու-
սակցությունը դարձնելով մասսայական: Կրարա-
ֆետկինն իր բոլոր ուժերը դործադրեց, վորպեսզի
Գերմանիայի կոմունիստական կուսակցության մեջ
ներգրավեր Անկախ սոցիալ-ղեմոկրատական կու-
սակցության մեջ մտած պրոլետարական մարտիկ-
ներին: Հենց նրան, նրա հեղինակությանը և նրա
կատարած մեծ աշխատանքին և հարկավոր վերա-
գրել Անկախ սոցիալ-ղեմոկրատական կուսակցու-
թյան զգալի մասի՝ կոմունիստական կուսակցու-
թյան հետ Գաալի համագումարում (1920 թ.) մի-
ավորվելու հաջողությունը: Այդ համագումարում
Երնստ Թելմանը կոմինտերնի գերմանական սեկ-
ցիայի շարքերը մտցրեց Անկախ սոցիալ-ղեմոկրա-
տական կուսակցության համբուրգի համարյա ամ-
բողջ կազմակերպությունը:

Կլարայի հետագա կյանքն ամենասերտ կեր-
պով կապված է յեղել Գերմանիայի կոմունիստա-
կան կուսակցության պատմության հետ, քաղաքա-
կան պարզուոց գծի համար մզկող պայքարի հետ:
Կլարա Յետկինը հեռու չի մնացել գերմանական
ձախ սոցիալ-ղեմոկրատաների անցյալի հետ կապ-
ված տատանումներից: Նա պետք է աղատագրվեր
սոցիալ-ղեմոկրատական, լուժեմբուրգական տը-
րագիցիաների վորոշ մնացուկներից: Նրա համար
ղեպի բոլշևիզմը տանող ուղին ինքնորոշման մի
բարդ պրոցես է յեղել:

Սակայն նա ուներ այն գնահատելի հատկու-
թյունը, առանց վորի չի կարելի բոլշևիկ լինել,
առանց վորի բոլշևիկը չի կարող աճել և զարգա-
նալ կուսակցության հետ միասին և կուսակցու-
թյան ներսում. նա չեր վախենում քննադատու-
թյունից և ինքնաքննադատությունից, նա կարո-
ղանում եր սովորել իր սխալների հիման վրա,
հաղթահարել այդ սխալները և առաջ շարժվել:

Բերենք մի որինակ: 1921 թվին Կլարա Յետկի-
նը, համաձայն չինելով Կոմինտերնի տակտիկայի
հետ— իտալիայում ինքնուրույն կոմունիստական
կուսակցություն կազմակերպելու հարցում, դուրս
յեկավ Գերմանիայի կոմունիստական կուսակցու-
թյան կենտկոմից և դրանով իսկ լրջորեն խախտեց
կուսակցական կարգապահությունը: Այն անողոք
քննադատությունը, վորով Լենինը դատապարտեց
Կլարա Յետկինի վարմունքը, վոչ միայն դրզեցնը-
րան վճռականորեն խօսելու իր կապերը ունենալու
Պառլ Լեվիի հետ (վորի հետ նա նախկինում անձ-
նապես կապված է յեղել), այլև գիտակցելու իր
սխալը և հաստատելու իր հավատարմությունը Կո-
մինտերնին: Իր հիշողությունների մեջ նա հետեւյալ
տողերն ե դրել այդ մասին.

«Դրա հետ միասին յես ունեյի նաև անձ-
նական «պարտքի հաշիվ»: Իտալական սոցիալ-

դեմոկրատիայի Լիվորնոյի կոնգրեսի և Գործկոմի տակտիկայի նկատմամբ դերմանական կուսակցության դեկավարության դիրքը վորոշելու ժամանակ առաջացած տատանումներն ինձ դըղեցին դուրս գալ կենտրոմի կազմից։ Ծանր, շատ ծանր եր ինձ համար այն դիտակցությունը, վոր կարգապահության այդպիսի խախտման հետեւանքով յես խիստ հակասության մեջ ընկա նրանց հետ, ովքեր քաղաքականապես ամենից ավելի մերձավոր ելին ինձ համար, խիստ հակասություն՝ ուստի բարեկամներիո հետ։

Կոմինտերնի III Համաշխարհային կոնգրեսի գումարման ժամանակից՝ 1921 թվից սկսած Կլարա Յետկինը կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմի և Նախագահության անդամ և հանդիսացել։ Վորպես կոմինտերնի ներկայացուցիչ՝ նա շատ անդամ մասնակցել ե զանազան յերկրների բանվորական կուսակցության համագումարներին։ Ֆրանսական սոցիալիստական կուսակցության՝ Տուրում կայացած կոնգրեսում նա իր խորապես մտածաված, հեղափոխական հիմնալի յելութով պատվիրակների մեծ մասին կարողացավ համոզել կոմինտերնի գծի ճշտության մեջ և դրանով իսկ մեծ ողնություն ցույց տվեց ֆրանսիայում կոմունիստական կուսակցություն ստեղծելու գործին։ Այդ նույն թվին կայացած՝ Իտալիայի սոցիալիստական կուսակցության կոնգրեսում (նրա՝ անլեգալ կերպով այդ կոնգրեսը զնալը շատ մեծ դժվարությունների հետ եր կապված յեղել) Կլարա Յետկինը հմտորեն և յեռանդունկերպով պաշտպանել ե կոմինտերնի քաղաքականությունը։ Տրոցկիստական և աջ դավաճանների դեմ Լենինի-Ստալինի կուսակցության մղած պայքարում նա հաստատուն կերպով կանգնած է յեղել Համ. Կ(ւ)Կ-ի գլխավոր գծի կողմը։ Կլարա Յետկինը մեծ ակտիվություն

ծավալեց հականեղափոխական տրոցկիստական և աջ սրիկաների մերկացման և նրանց վտարման ժամանակ։

Իր ամբողջ յերկարամյա կյանքն անցկացնելով սոցիալ-դեմոկրատական շարժման և Ա Խնտերնացիոնալի շարքերում՝ Կլարա Յետկինն իր կյանքի վերջին տասնամյակում յեկավ դեպի բոլշևիզմը և դարձավ Կոմունիստական ինտերնացիոնալի գրոշակակիրը։ Լինելով Ֆրիդրիխ Ենգելսի աշակերտուհին և գործակիցը, Ա Խնտերնացիոնալի ստեղծողներից մեկը, Ավգուստ Բերելի, Վիլհելմ Լիբկնեխտի պայքարի ընկերը նրանց լավագույն ժամանակներում, — Կլարա Յետկինն իր կյանքի յոթերորդ տասնամյակում դարձավ Լենինի և Ստալինի խանդավառ աշակերտուհին և հետեւորդը։ Հարգանքի արժանի այդ կյանքի պատմության մեջ արտացոլվել ե մարքսիզմը, վորը լենինիզմի մեջ դըտավ իր հետագա ստեղծագործական զարգացումը։

ՖԱՇԻԶՄԻ ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ

Կլարա Յետկինի գործունեյությունը իսպանակցության համար, հիալերյան Փաշիզմի դեմ, դեպի համաշխարհային նոր պատերազմը տանող նրա լըկտի պրովոկացիաների դեմ մղված պայքարի մի հոյակապ որինակ է։ Կլարա Յետկինն անմիջապես հասկացավ և անհապաղ սկսեց բացատրել աշխատավոր մասսաներին, թե ինչպիսի հսկայական վրատանդ է բերում նրանց Փաշիզմը։ Գերմանիայի քաղաքական կյանքը 1932 թվականին նշվել ե նրանով, վոր զասակարգային պայքարը շատ ուժեղ չափով սրված է յեղել։ Բուրժուազիան իր տիրապետության նկատմամբ սպառնալիք եր տեսնում աճող կոմունիստական շարժման կողմից, նա տեսնում եր, վոր սոցիալ-դեմոկրատիայի և պրոՓաշիությունների ու Փորմիստական առաջնորդներն արդեն ի վիճակի չեն այլևս դիմանալու բանվոր դասակարգի հեղափոխական տրամադրություննե-

ըի աճումը, և սկսեց փրկություն վորոնել ֆաշիզմի մեջ:

Կայզերական գեներալ-ֆելդմարշալ Հինդեն-բուրգը, վոր յերկրորդ անգամ գերմանական հանրապետության նախագահ եր ընտրվել սոցիալ-դեմոկրատիայի ոգնությամբ, 1932 թվականի դարն ունեցած նշանակեց Պապենի կառավարությունը—ֆաշիստական դիկտատուրայինախապատրաստման կառավարությունը: Բանվորական մասսաների ճշնշման տակ ժամանակավորապես արգելված ֆաշիստական տեսորիստական բանդաները— գրոհային և պահնորդական ջոկատները նորից լեզալիզացիայի յենթարկվեցին: Իրենց գոյությունը պահպանելով Փինանսական խոշոր մագնատների միջոցներով, վորոնք ֆաշիզմն եյին պաշտպանում, նրանք ներխուժում եյին բանվորական թաղամասերը, սպանում եյին հեղափոխական տրամադրությունների մեջ կասկածվող բանվորներին և նրանց զեկավարներին, չըլիզումներ և բանդիտային հարձակումներ եյին կատարում որովհիութենական տների, պրոլետարիատի կազմակերպությունների և հիմնարկությունների վրա: Թեև ֆաշիզմը գեռես իր ձեռքը չեր վերցրել Գերմանիայի քաղաքական իշխանությունը, սակայն նրա բանդաներն ավելի ու ավելի լիտի ձեռվ եյին հանգես դալիս, ավելի ու ավելի եյին ահարեկում բանվոր դասակարգին:

Պապենի կառավարությունը ցրեց ռայխստագր՝ և նոր ընտրություններ նշանակեց: Ֆաշիզմը զեմագոգիական ֆրազներով և խոստումներով կարողացավ վորսալ մանր բուրժուական մասսաների նշանակալի մասին, վորոնք խորապես հիասթափված եյին վայմարյան հանրապետության քաղաքականությունից:

Ընտրությունների հետևանքով ֆաշիստական մանդատների քանակը ռայխստագրում չափից դուրս

աճեց: Նոր ռայխստագրում ֆաշիստներին դիմադրում եր վճռական պայքարի պատրաստ կոմունիստական Փրակցիան, վորին պաշտպանում եր գերմանական բանվոր դասակարգի լավագույն, առաջավոր մասը: Ռայխստագի բուն կազմն իսկ արտացոլում եր դասակարգային պայքարի կատաղի կերպով սրված լինելը:

Ռայխստագի ավագագույն անդամը, վորը տրադիցիայի համաձայն պետք ե բաց աներ նորընտիր ռայխստագի առաջին նիստը, կոմունիստ կլարա Յետկինն եր: Նա այն ժամանակ 75 տարեկան եր: Ֆաշիստները կատաղության մեջ ելին: Նորանք սպառնում եյին, թե չեն թույլ տա կլարա Յետկինին ռայխստագը բաց անելու, վոր նրանք իրենց ձեռով հաշիվ կտեսնեն «բոլշևիկյան գործակալի» հետ, յեթե նա համարձակություն ունենալ հանդես գալու: Սակայն կլարա Յետկինը վորպես բոլշևիկ նահանջեց սպառնալիքների հանդեպ: Պառլամենտական այդ ձեականության կատարումը տվյալ պայմաններում բացահայտորեն արտահայտված մարտական քաղաքական ցույցի բնույթ եր ստանում: Մեակցիոն ռայխստագի պատերի մեջ, մեծ թվով ֆաշիստների զեմ հանդիման բարձր պետք ե հնչեր աշխատավոր, պայքարող ժողովրդի ձայնը:

Կլարա Յետկինն այդ ժամանակ Մուկվայում եր գտնվում: Նա հիվանդ եր և թույլ: Յերեսում եր յերկարատե, ծանր կյանքի, ուժասպառ անող աշխատանքի ազդեցությունը:

Հիվանդությունը բավական յերկար ժամանակ անկողնին եր գամել նրան: Նա համարյա կույր եր և կարողանում եր աշխատել միմիայն ուժեղ ակնոցներով: Նրա բոլոր բարեկամները շատ անհանգըտանում եյին, թե կդիմանա՝ արդյոք թուլացած կլարա Յետկինը այդպիսի լարվածության: Սակայն կլարա Յետկինի մեջ խանդավառվում եր պայքարելու նկատմամբ ունեցած անզուսպ հեղափո-

խական կամքը։ Նա վճռականորեն մերժեց բոլոր գգուշացումները և մեկնեց Բեռլին։

Բերենք փոքրիկ, բայց Կլարա Յետիինի համար չափազանց բնորոշ մի եպիզոդ։ Վորապեսզի կանխովի ֆաշիստների մահափորձը Կլարա Յետիինի կյանքի գեմ նրա Բեռլին հասնելու մօմենտին, Գերմանիայի կոմունիստական կուսակցության կենտրոնը Կլարային առաջարկեց գնացքից իջնել Բեռլին հասնելուց առաջ՝ վերջին կայարանում՝ Կյուստրինում և Բեռլին գնալ ավատմորիլով՝ հուսալի ընկերների վոչ մեծ խմբի հակողության տակ։ Կյուստրինում, կայարանի սանդուխքից վայր իջնելու ժամանակ Կլարային ուղեկցողներից մեկը սայթաքեց և ընկերու ժամանակ նրան քաշ տվեց իր հետեւից։ Բոլոր ընկերները նեավեցին դեպի աստիճանների վրա ընկած Կլարան։ Սակայն 75-ամյա Կլարան ցածր ձայնով սկսեց հանգստացնել նրանց։

— Ընկերներ, վոչինչ չի պատահել. . . Դե՛մ, հանգստացեք։

Նա վեր կացավ և ինքնուրյուն կերպով ցած իջավ սանդուխքից։ Ավտոմորիլը ուղացավ և նրան Բեռլին տարավ։

Յերեք որից հետո կայացավ ուայխստագի բացումը։ Նիստերի դահլիճի ամբողջ աջ կողմը լցված եր դարչնազույն մունդիրներ հազած ֆաշիստներով։ Դիտողների տրիբունը լիփ-լեցուն եր բազմությամբ՝ Բեռլինի խոչորագույն ձեռնարկությունների ներկայացուցիչներով։ Փուռնալիստների տրիբունների վրա—ամերիկյան, անգլիական, ֆրանսիական մամուլի, ինչպես նաև այլ յերկրների մամուլներկայացուցիչներով։ Ժուռնալիստների տեղ բռնել։ Դաշլիճում ուժեղ լարվածություն եր տիրում։ Բացի կոմունիստներից, վոչ վոք չգիտեր, թե կդրավի՞ արդյոք Կլարա Յետիինը նախագահի տեղը, հանդես կդառ արդյոք նա քաղաքական ձառով։

Լուսավորությունն եղ ավելի ուժեղացավ, յերբ

մոտեցավ ուայխստագը բաց անելու ժամանակը, եւ ամբողջ շենքում լսվեց աղդանչանի ձայնը, վորը գեղուտատներին կոչ եր անում գրավելու իրենց տեղերը։ Տիրեց խորին լուռթյուն, վորը խանդարեց միմիայն վերջին կարծատե զանդր, վոր հայանում եր նիստն սկսվելու մասին։ Նախագահության սեղանի մուտքը ծածկող դռան վարագույրը բացվեց, և նախագահի տեղում յերկաց Կլարա Յետիինը, վորին բռնել ելին յերկու կանայք՝ ուայխստագի կոմունիստական Փրակցիայի անդամներ։ Կոմունիստաները և տրիբունի վրա գտնվող միքանիքատանյակ բանվորներն իրենց մարտական վետերանին վողջունեցին «Խոռ Փրո՛նտ» յեռակի բացականացությամբ։ Ֆաշիստական վարձկանների դարձնացույն ծովը քարացավ նստարանների վրա։

Կլարա Յետիին սկսում ե խոսել։ Խոսքերը դժվարությամբ են զուրս գալիս նրա շրթունքներից։ Նա տալիս ե ձեւական հարցը չկա՞ արդյոք այստեղ ուայխստագի ավելի ավագ անդամ, քան ինքն ե։ Պատասխան չկա։ Այն ժամանակ Կլարա Յետիինը քաղաքական մեծ ձառ ե սկսում, մեղադրական ձառ՝ պատերազմի հրձիգների գեմ։ Նա տալիս ե վերահսկամաշխարհային նոր իմպերիալիստական պատերազմի պատերազմ և մասսաներին կոչ ե անում՝ գնալ պատերազմի գեմ պայքարելու միակ ձիչտ ուղիով՝ բոլոր աշխատավորների միակ ձիչտ ուղիով։ Նրա ձառը մասնական ծակատի ստեղծման ուղիով։ Նրա ձառը մի հզոր մեղադրանք եր Փաշիզմի, պատերազմի հրձիգների, կապիտալիզմի գեմ։ Կլարա Յետիինը Գերմանիայի աշխատավորներին համարձակ կերպով կոչ ե անում պայքարել խաղաղության համար, ընդգծում ե Խորհրդային Միության ականագոր գերը այդ պայքարում, յելք ե ցույց տալիս մասսաներին— պրոլետարական հեղափոխություն, կոմունիզմ։

Ուայխստագի այդ պատմական նիստում Կլարա

Յետկինն այնպիսի խոսքեր արտասանեց, վորոնք այսոր ևս Փաշիզմի դեմ պայքարի ծրագիր են Հանդիսանում գերմանական կոմունիսաների և Գերմանիայի աշխատավոր մասսաների համար:

«Մոմենտի պահանջը— այբ բոլոր աշխատավորների միասնական ճակատն է Փաշիզմի դեմ պայքարելու համար։ Ֆաշիզմը պետք է հաղթահարել նրա համար, վոր պահպանվի սորկացվածների և շահագործվողների հզորությունը, նրանց կազմակերպությունների ուժը, վերջապես՝ նրանց ֆիզիկական դոյլությունը։

Այդ հրամայական սպառմական անհրաժեշտության առաջ հետին պլանի վրա պետք է քաշվեն քաղաքական և որովհիութենական բոլոր տարածայնությունները։ Բոլոր նրանք, ում վտանգ են սպառնում, բոլոր նրանք, ովքեր վնաս են կրում Փաշիզմից, պետք է միասնական ճակատ ստեղծեն Փաշիզմի և նրա ազենտուրայի դեմ։ Աշխատավորների ինքնահաստատումը Փաշիզմի դեմ մզվող պայքարում, — ահա թե վորն է միասնական ճակատի մերձավորագույն, Հիմնական նպատակյալը ճգնաժամերի, իմպերիալիստական պատերազմի դեմ և այդ չարիքների արմատի՝ արտադրության կապիտալիստական սիստեմի դեմ մզվող պայքարում»։

Ավարտելով իր ճառը, Կլարա Յետկինն աւաց.

«Յես բաց եմ անում ռայխստագը իմ պարտականությունից յելնելով՝ վորպես նրա ավագագույն դեպուտատը։ Յես հույս ունեմ դեռ ապրելու մինչեւ այն ուրախալի որը, յերբ յես, ավագության իրավունքով՝ բաց կանեմ Խորչըրդային Գերմանիայի առաջին համագումարը։

Մահը Կլարային խանգարեց իրականացնել այդ բաղձանքը։ Մակայն գերմանական պրոլետարիատը

կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բոլոր ուժերով կողայքարի միասնական ժողովրդական ճակատ հաստատելու համար Փաշիզմի դեմ մզվող պայքարում, կտապալի Փաշիզմը և, հետեւ վելով ԽՍՀՄ-ում կատարված սոցիալիստական հեղափոխության մեծ որինակին, կսեղծի ազատ, սոցիալիստական Գերմանիա։

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կլարա Յետկինն անդուլ մարտնչում եր միջազգային համերաշխության համար, ՄՈՊԻ-ին ըստ-ամենայնի ոժանդակելու համար։ Իր մահվանից ընդամենը մի քանի որ առաջ նա մի կոչ գրեց ՄՈՊԻ-ի կազմակերպած՝ ողնության միջազգային չարաթվակապակցությամբ։ Նա ամ բողջ աշխարհի պրոլետարիատին կոչ եր անում պաշտպանելու գերմանական բանվորների հերոսական պայքարը հիտլերյան Փաշիզմի տեսորի դեմ։ Այդ կոչը վերջանում եր հետեւյալ խոսքերով.

«Ֆաշիզմի թշնամինե՞ր բոլոր յերկրներում, յես կոչ եմ անում ձեզ՝ ՄՈՊԻ-ի հետ միասին լիովին կատարել միջազգային համերաշխության ձեր պարտքը։ Այն գոհաբնությունը, վոր ձեզանից պահանջում է ՄՈՊԻ-ը, չնչին ե՝ համեմատած այն գոհաբերության հետ, վոր կատարում են հեղափոխական բանվորներն որը ըստ որևէ՝ Փաշիզմի դեմ մզվող իրենց հերոսական պայքարում։ Զեղանից վոչ վոք իրավունք չունի հանգստանալու մինչեւ այն ժամանակ, յերբ Փաշիզմը, վորին հաջորդում են արյունահեղ ճնշումը, քաղցը, տեսորն ու պատերազմը, գլխավորին չշախվալիքն»։

Կլարա Յետկինն իր կյանքի վերջին տարիներին իր բոլոր ուժերը տվեց պրոլետարական համերաշխության մեծ, համաշխարհային շարժմանը։

1924 թվականին, յերբ ստեղծվում եր համերաշ-խության միջազգային կազմակերպությունը՝ ՄՈՊԲ-ը, Կլարա Ֆետկինն ընտրվում է նրա նախագահը։ Այդ պատահականությունը չեր։ Այդ բղիսում եր Կլարա Ֆետկինի ամբողջ գործունեյությունից։ Կլարա Ֆետկինն իր բոլոր ուժերը գործադրեց, վորպեսզի ՄՈՊԲ-ը վերածեր Փաշիզմի զոհերին լայն, միջազգային ոզնություն ցույց տվող կազմակերպության, սպիտակ տեռորի գեմ մղվող միջազգային պայքարի հաստատուն պատվարի։

Փայլուն եր կլարա Ցետկինի գործունեյությունը միջազգային համերաշխության բնագավառում :

Չտեսնված արյունահեղ տեռորը, վոր հիտկեցան Փաշիզմը և հաստատել եր Գերմանիայի աշխատավոր մասսաների վրա, կարեոր խնդիր գրեց ՄՈՊԻ-ի առաջ: Միմիայն ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաների ողնությունը գերմանական բանվորներին՝ հիտլերյան Փաշիզմի դեմ մղած նրանց պայքարում, միմիայն բոլոր յերկրներում պատերազմի Փաշխտական հրձիգների դեմ միասնական ճակատ ստեղծելը, միմիայն միջազգային համերաշխությունը, Փաշխտական ահեռորի դուերի նկատմամբ հոգացողությունը կոգնեն վոչչացնելու Փաշիզմը և խուսափելու մեծագույն դժբախտությունից՝ ժողովուրդների նոր սպանդից: Այդ մեծ խնդիրն իր ամբողջ ծավալով կլարա Յետիկինը գրեց մասսաների առաջ՝ վորպես միակ ուղին—ընկեր Երնստ Թեմմանին՝ Գերմանիայի աշխատավոր մասսաների առաջնորդին՝ հիտլերյան Փաշիզմի արյունավոր ճիրաններից աղաջնորդին՝ հիտլերյան Փաշիզմի արյունավոր ճիրաններից աղաջնորդին՝ համար:

Բայց վո՞չ միայն Երնստ Թեղմանին ազատելու, այլև բոլոր բանտարկված հակաֆաշխաներին ազատելու, Փաշխատական բանտերի ավերման համար, բուն հիտլերյան Փաշիզմի տապարման համար պայքարելու մասին եր խոսում Կլարա Ցետկինն իր բոցաջունչ կոչի մեջ, վորով նա ավարտեց իր վերջին աշխատությունը:

«Նայեցեք գերմանիային, վորտեղ մեռ-
նող կապիտալիզմն իր փրկությունը վորոնում
և Փաշխղմի մեջ։ Ֆաշխղմը հասատեց աշխա-
տավորների Փիղիկական և Հոգեկան վոչնչաց-
ման ռեժիմ, բարբարոսության և գաղանու-
թյան ռեժիմ, բարբարոսություն և գաղանու-
թյուն, վորոնք չառ ավելի գերազանցեցին
Ֆիջնադարի սարսափները։ Ամբողջ աշխարհը
վրդովված է դարչնագույն բանդիտների դա-
ժանությունների համար։ Համերաշխություն
պայքարողների հետ և ողնություն, նյութա-
կան ողնություն բարբարոսական Փաշխղմի զո-
ւերին— այս և Ծոմենտի հրամայական պահան-
ջը . . .»։

Կլարա Յետկինն այս առղերը, իր վերջին կոչը,
գրում եր իր սրտի արյունով, բոցաշունչ մարտա-
կան հոգու կրակով։ Ինչպես նրա բոլոր հոգված-
ները, նամակներն ու ճառերը, այնպես էլ այս կոչը
տողարված է խոր կարեկցությամբ, նա խոսում է
մեծ մարտնչողի անխղելի կապի մասին հակառեղա-
փոխության հազարավոր անանուն գոհերի հետ, նա
սրբազն ատելությամբ և լցված աշխատավորների
թշնամիների և գահիների նկատմամբ։

Կլարա Ցետինը խորապես տանջվում էր բոլոր ճնշվածների և խոշտանգվածների համար, բոլոր ստորացվածների և անարդվածների համար։ Նա տանջվում էր կանանց և մայրերի համար, այն յերեխաների համար, վորոնց սպիտակ տեռորը զբը-կել էր ծնողներից, հացից ու տան հարկից։ Չե՞ վոր Կլարան յերիտասարդ ժամանակ իր սեփական փորձով իմացավ այն զրկանքներն ու զօհարերությունները, վոր պահանջում է հեղափոխական մարտիկներից անլեզար աշխատանքը կապիտալիստական յերկրներում, հեղափոխական պայքարը՝

արտակարգ որենքների, վոստիկանական հետապընդումների արտաքսումների պայմաններում:

Այժմ, յերբ Փաշխտական ազրեսոսորները բորբոքում են համաշխարհային նոր պատերազմի հրոդեհը, առանձնահատուկ ուժնությամբ են հնչում կլարա Յետկինի խոսքերը, վորոնք միասնական ճակատի ստեղծման կոչ են անում:

Ֆաշխտական ռազմական դաշինքի, վոր կընքված ե Բեռլինի, Հռոմի և Տոկույի միջև, և Փաշխտական ազրեսոսորներին Անդլիայի և Ֆրանսիայի կողմից ցույց տրված ոժանդակության արդյունքում հանդիսացավ Իտալիայի պատերազմը Հարեշտանում, իտալ գերմանական ինտերվենցիան իսպանիայում, ճապոնական հափշտակիչների ներխուժումը Չինաստան, Ավստրիայի հափշտակումը, Զեխուլովակիայի և ղեմոնկրատական այլ յերկրների նկատմամբ արված սպառնալիքները և սոցիալիզմի յերկրի զին պատերազմ փաթաթելու ձգտումը:

Ամրապնդել միջազգային համերաշխությունը, լայնացնել միասնական ժողովրդական ճակատը, — այս ե ահա ֆաշիզմի դեմ պայքարելու, խաղաղության համար պայքարելու միակ ուղին:

Մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինը կոմյերիտական իվանովին ուղղած իր նամակում ասում է, վոր

«...միջազգային պրոլետարիատի լուրջ ողնությունը հանդիսանում ե այն ուժը, առանց վորի չի կարելի վորոշել մի յերկրում սոցիալիզմի վերջնական հաղթանակի ինդիքը: Այս, իհարկե, չի նշանակում, վոր մենք ինքներըս պետք ե նստենք, ձեռքներս ծայած, սպասելով արտաքին ողնության: Ընդհակառակը, միջազգային պրոլետարիատի կողմից ցուցաբերված ողնությունը պետք ե միացված լինի մեր յերկրի պաշտպանությունն ուժեղացնելու, Կարմիր բանակն ու Կարմիր նավատորմն ու-

ժեղացնելու, ռազմական հարձակման ու բուրժուական հարաբերությունների վերականգնըման փորձերի դեմ պայքարելու համար ամբողջ յերկիրը մորիլիզացիայի յենթարկելու մեր աշխատանքի հետ»:

Ընկեր Ստալինն այդ նամակում նորից ընդգրծում է, վոր հանուն սոցիալիզմի հաղթանակի և ընդգեմ պատերազմի ու Փաշիզմի մզվող պայքարում ամենաուժեղ միջոցը սերտ, անքակտելի դաշինքն է և խոր համերաշխությունը միջազգային բանվոր դասակարգի և բոլոր նրանց, ովքեր պայքարում են խաղաղության համար, ազատության համար, սոցիալիզմի համար:

Կլարա Յետկինի որինակը նոր ուժեր և տալիս քեզ այդ պայքարում: Փաշխտական դահիճների ամենակատաղի հետապնդումներին հակառակ՝ մենք բարձր կապահենք պրոլետարական համերաշխության գործը: Հակաֆաշխտական, գեմոկրատիայի և պրոդրեսի, ազատության և խաղաղության բոլոր բարեկամները միավորվում են համերաշխության մեծ գործում: Հարյուր հազարավոր մարդիկ շարունակում են իրենց կյանքը տալ միջազգային համերաշխության մեծ գործին: Այդպիսին եր, որինակ, հեղափոխական Ռուլովի Կլառուը, վորը մահապատճի յենթարկվեց նրա համար, վոր աշխատանք եր տարել Գերմանիայի անկեզալ ՄՈՊԻ-ի մեջ: Կլարա Յետկինի ավանդն իրագործվում է կյանքում: Լայնանում ե պայքարի ճակատն ընդդեմ պատերազմի և Փաշիզմի, հանուն խաղաղության և սոցիալիզմի:

Կեցցե՛ այն գործը, վորին ծառայում եր Կլարա Յետկինը, վորի հիշատակը մենք խորապես հարցում ենք և վորի գործը շարունակում ենք:

Կեցցե՛ միջազգային պրոլետարական համերաշխությունը և ՄՈՊԻ-ը՝ նրա հզոր կազմակերպիչը:

Ամեն մի հակաֆաշխտ, խաղաղության և ա-

զատության ամեն մի բարեկամ, ամեն մեկը, ով
ուղում և ոգնել սպիռակ տեսորի զոհերի՝ թող
սիանա համերաշխության միջազգային դործին,
թող միանա ՄՈՊՐ-ին։ Մեր խնդիրն ե՝ միավորել
բոլոր ուժերը։ Միմիայն միջազգային բանվոր դա-
սակարգի միասնությունը, վոր հենվում ե մեր սո-
ցիալիստական հայրենիքի անսասան հզորության
վրա, խաղաղության նրա անփոփոխ քաղաքակա-
նության վրա, նրա կարմիր Բանակի և Նավա-
տորմի հզորության վրա,— անպարտելի կղարձնի
մեր ուժերը ֆաշիզմի դեմ, սոցիալիզմի հաղթա-
նակի համար մղվող պայքարում։

Ավելի՛ բարձր պահենք միջազգային պրոլետա-
րական համերաշխության դրոշը։

Խմբագիր՝ Արմ. Թամազյան
Ռուս. թարգմ. Շ. Մանգոյան
Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբադրիչ՝ Գար. Հակոբյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Յ. Տ. Մինասյան

Գլավիտի լիազոր՝ Վ. 2092. Հրատ. № 4869
Պատվեր 312. Տիրաժ 2500
Թուղթ 62×94. Տպագր. 3 $\frac{1}{4}$ մամ.
Մեկ մամ. 21312 նշան.
Հանձնված ե արտադրության 23 մարտի 1939 թ.
Ստորագրված ե տպագր. Համար 20 մայիսի 1939 թ.
Գետհրատի 1 տպարան, Յերևան, Լենինի 65

- 20 -

ՀՀ Ազգային գրադարան



NL0987261

19 ИЮН. 1939

ԳԻԱԸ 90 Կ.

11

28686

ВИЛЬГЕЛЬМ ПИК

КЛАРА ЦЕТКИН

Գիշ Դրմ. ССР, Еրևան, 1939 թ.